## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 82-Ա

### ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 7 նստաշրջանի վեցերորդ՝ 2025 թվականի հունիսի 20-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Եղեգնաձոր համայնքի 2025-2026 թվականների համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
4) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին:
6) «Լեգրանդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Եղեգնաձոր քաղաքում նախատեսվող գործունեությանը համաձայնություն տալու մասին:

7) Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների աշխատակիցներին հերթական արձակուրդն օգտագործելու համար թույլտվություն տալու և սաներին արձակուրդ տրամադրելու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողը մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու մասին:

9) Լեհաստանի Չեխանովեց քաղաքի հետ համագործակցելու համար համաձայնություն տալու մասին:

10) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 83-Լ

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2025-2026 թվականների համայնքային սոցիալական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԹՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի 20-ի թիվ 83-Լ որոշման



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**2025**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ........ 3
I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ........ 3
ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, բնակավայր/քաղաք Եղեգնաձոր ........ 3
Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Մալիշկա բնակավայր ........ 5
Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Գլաձոր բնակավայր ........ 5
Վայոց ձորի մարզ Եղեգնաձոր համայնք Գետափ բնակավայր ........ 6
Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Վերնաշեն բնակավայր ........ 6
II. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐԸ ........ 7
III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ և ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ ........ 9
IV. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ........ 11
V. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ և ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ........ 12
SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ........ 12
VI. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ ........ 13
VII. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ (ԱՆՁՆԱԳԻՐ) ........ 14
1. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 1՝ բնաիրային աջակցության տրամադրում ........ 14
2. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2՝ ուսման վարձավճարների հատուցում ........ 17
3. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 3՝ բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ ........ 19
4. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 4՝ բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում ........ 21
5. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 5՝ համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների վարձերի նկատմամբ արտոնության սահմանում ........ 23
6. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 6՝ կոմունալ վճարների հատուցում ........ 26
7. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 7՝ հուղարկավորության ծախսերի հատուցում ........ 28
VIII. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ՀԱՏՈՒՑՄԱՆ) ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ ........ 30
IX. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ........ 31
X. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ) ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ........ 31
XI. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ........ 32
XII. ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ........ 33
XIII. ՁԵՎԱԹՂԹԵՐ ........ 34

# ՆԱԽԱԲԱՆ

Սույն ծրագրով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքում իրականացվող սոցիալական ծրագրերը, մասնավորապես՝ հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում հայտնված ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (ընտանիքի) կարիքների գնահատման չափորոշիչները և դրանց համապատասխան միավորները, սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմումի ձևը, ընտանիքի կարիքների գնահատման թերթիկի ձևը:

Ծրագիրը մշակվել է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14.11.2024 թ. ՀՕ-414-Ն օրենք) 12-րդ հոդվածի պահանջների համաձայն և ուղղված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների իրականացմանը:

## I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքը գտնվում է Վայոց ձորի մարզում, մարզի գրեթե կենտրոնական հատվածում: Խոշորացվել է 2021 թվականին: Եղեգնաձոր խոշորացված համայնքը բաղկացած է մեկ քաղաքային (Եղեգնաձոր) և չորս գյուղական (Վերնաշեն, Գլաձոր, Գետափ, Մալիշկա) բնակավայրերից: Սահմանակից է Վայոց ձորի մարզի Եղեգիս, Արենի, Վայք համայնքներին: Վարչական տարածքը մոտ 24.388.7 հա է, բնակչության թիվը՝ 20480:

### ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, բնակավայր/քաղաք Եղեգնաձոր

Հայոց լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից է: Ըստ պատմական աղբյուրների Եղեգնաձորը միջնադարում անվանվել է Փոնձաթաղ, Խոտորալեզ, հետագայում նաև Եղեգիք, Եղեգյաց, Եղեգնաձոր: 1935 թվականին վերանվանվել է Միկոյան՝ Խորհրդային Միության քաղաքական գործիչ Անաստաս Միկոյանի պատվին: 1958 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի գերագույն խորհրդի հրամանագրով Միկոյանի շրջանը և համանուն ավանը վերանվանվել է Եղեգնաձոր:

Վայոց ձորի մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքը խոշորացված համայնքի վարչական կենտրոնն է: Գտնվում է Հայաստանի հարավ-արևելյան հատվածում՝ մայրաքաղաք

Երևանից 123կմ հեռավորության վրա: Քաղաքի վարչական տարածքը մոտ 2642 հա է, ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը՝ 1250մ: Բնակչության թիվը 9587 է:

Եղեգնաձոր քաղաքում է գտնվում մարզպետարանը, համայնքապետարանը, ուժային կառույցներ: Եղեգնաձոր քաղաքում գործում են երեք մանկապարտեզներ, երկու հիմնական դպրոց, մեկ վարժարան, մեկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ), մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն և գեղարվեստի դպրոց՝ տարբեր մշակութային և արհեստագործական խմբակներով, մարզադպրոց, երաժշտական դպրոց, «Ջիվանու անվան աշուղական դպրոցի» մասնաճյուղ, մշակույթի տուն, մարզային գրադարան, թանգարան, պատկերասրահ, ամֆիթատրոն, փոստային բաժանմունք, մեկ հիվանդանոց, մեկ բժշկական կենտրոն, հյուրատներ և հյուրանոցներ, ռեստորաններ, արագ սննդի սպասարկման կետեր:

Եղեգնաձորը մինչև 90-ական թվականները եղել է խոշոր արդյունաբերական կենտրոն: Քաղաքում գործել է ռելեի գործարանը՝ 1100 աշխատատեղով, տրիկոտաժի ֆաբրիկան՝ 500 աշխատատեղով, էլեկտրոսարք գործարանը՝ 300 աշխատատեղով, պահածոների գործարանը՝ 250 աշխատատեղով, կոշիկի ֆաբրիկան՝ 200 աշխատատեղով, պանրագործարանը, գորգագործական ֆաբրիկան և այլն: Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, որտեղ ընդգրկված էին բնակչության 35% այժմ չեն գործում:

Ներկայումս ամենախոշոր ձեռնարկությունը ռելեի գործարանն է 300 աշխատատեղով, որտեղ արտադրվում են հիմնականում ավտոմեքենաների ռելեներ: Քաղաքում գործում է ճանապարհաշինարարական և շահագործման ձեռնարկությունը, որտեղ աշխատում են 94 մարդ: Նոր՝ տնտեսական հարաբերությունների պայմաններից ելնելով, քաղաքում զարգանում են փոքր ձեռնարկությունները՝ գինեգործական, տակառագործական, քարի մշակման, բետոնյա իրերի, հացաթխման, հրուշակեղենի պատրաստման, կահույքի արտադրության, կաթի, մրգերի վերամշակման արտադրամասեր և այլն: Նշված ձեռնարկություններում ընդհանուր առմամբ աշխատում են 120 մարդ: Արտադրվում է Արենի, Վերնաշեն բարձր տեսակի գինիներ, տարբեր չափերի փայտյա տակառներ, ծաղկամաններ, երեսպատման սալիկներ, շինաքար, միջնորումի սալիկներ, կահույք և այլն:

Համայնքի տարածքում հանքային հանածոներից կան՝ շինարարական քար (ֆելզիտ, գրանիտ), ապակու հումք, գրավյա:

Եղեգնաձոր քաղաքում գյուղատնտեսական նշանակության հողերը 1842.73հա են, վարելահողերը՝ 351.27հա, իսկ բազմամյա տնկարկները՝ 61.87հա: Բնակլիմայական պայմանները նպաստավոր են դաշտավարության, այգեգործության համար: Օրեցօր ավելանում են գյուղատնտեսական նորագույն տեխնալոգիաներով հիմնվող այգիների թիվը:

Եղեգնաձոր քաղաքում գործում է Սուրբ Աստվածածին եկեղեցին: Առկա են մատուռներ, խաչքարեր, զբոսայգիներ, հուշարձաններ: Եղեգնաձոր քաղաքի հարակից տարածքով է անցել Մետաքսի ճանապարհը: Այդ հատվածում պահպանվել են որոշ

ենթակառուցվածքներ, այդ թվում՝ միջնադարյան սուր կամուրջը, որը համարվում է քաղաքի խորհրդանիշներից մեկը: Եղեգնաձոր քաղաքի և համայնքի մյուս բնակավայրերի հարուստ պատմամշակութային ժառանգությունը (եկեղեցիներ, վանքեր, Գլաձորի համալսարանի ավերակները, Նժդեհի գերեզմանը և այլն) մեծ հեռանկարներ է ստեղծում տուրիզմի զարգացման համար, որի վառ ապացույցն են Եղեգնաձորում և համայնքի մյուս բնակավայրերում օրեցօր ավելացող գաստրոբակերը, համտեսի սրահները, հյուրատները, հանգստի գոտիները:

### Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Մալիշկա բնակավայր

Մալիշկա բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 7 կմ հարավ-արևելք, Արփա գետի աջ ափին, պատմական Մոզ քաղաքի հարևանությամբ: Երևան քաղաքից գտնվում է 125 կմ հեռավորության վրա: Բնակավայրն ունի չոր, բարեխառն կլիմայական պայմաններ և կտրտված ռելիեֆ ու հարավային կողմնադրություն: Մալիշկա բնակավայրը վերաբնակեցվել է 1828-1831 թթ. Իրանի Խոյ և Սալմաստ գավառներից ներգաղթած հայ ընտանիքներով: Այդ տարիներին վերաբնակեցվել է 42 ընտանիք: Ներկայումս բնակավայրն ունի 4875 բնակչություն և 1507 տնտեսություն: Բնակավայրն ապահովված է էլեկտրականությամբ, խմելու և ոռոգման ջրերով, բնական գազով և աղբահանության ծառայությամբ: Գործում է հանրային տրանսպորտ, որն ամենօրյա ռեժիմով, բացառությամբ կիրակի և ոչ աշխատանքային օրերին իրականացնում է Մալիշկա-Եղեգնաձոր-Մալիշկա ուղևորափոխադրում: Կապի և հեռահաղորդակցության հետ կապված խնդիր չկա, բնակավայրը ապահոված է ինտերնետ ծածկույթով: Գյուղում ներբնակավայրային ճանապարհների լուսավորության և ասֆալտապատման աշխատանքները կրվում են շարունակական բնույթ:

Բնակավայրում գործում է երկու դպրոց, համայնքային երկու մանկապարտեզ, ամբուլատորիա, համայնքային գրադարան, համայնքային մարզադպրոց, փոստային բաժանմունք, մշակույթի տուն:

Խորհրդային տարիներին գյուղում գործել է կոնդենսատորների գործարան շուրջ 600 աշխատատեղով, որն այնուհետև վերափոխվել է թանկարժեք քարերի մշակման և ոսկու վերամշակման արտադրամասի, սակայն այսօր չի գործում: Այժմ գյուղում գործում է զովացուցիչ ըմպելիքների երկու արտադրամաս: Գյուղում զբաղվում են նաև հողագործությամբ և անասնապահությամբ:

Գյուղում առկա են պատմամշակութային բնական հուշարձաններ, գործում է Սուրբ Աննա եկեղեցին, բնակավայրի զբոսաշրջային պոտենցիալը կարող ենք համարել «Մոզ» քաղաքը և Վայոց Սարը:

### Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Գլաձոր բնակավայր

Գլաձոր բնակավայրի բնակչությունը կազմում է 2710 մարդ: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 120 կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոնից՝ 3 կմ: Ծովի մակերևույթից բարձրությունը կազմում է մոտ 1350մ: Կլիման մերձարևադարձային է, չոր, ցամաքային: Ամռանը շոգ է, ձմռանը՝ բարեխառն:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ: Այստեղ կլիման նպաստավոր է այգեգործության և խաղողագործության համար:

Բնակավայրում առկա է դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, մշակույթի տուն, փոստային բաժանմունք:

Գլաձորում են գտնվում «Սպիտակավոր», Սբ. Աստվածածին, Սբ. Հրեշտակապետաց եկեղեցիները, XII-XIV դարերի խաչքարեր, իսկ գյուղից հարավ-արևմուտք՝ «Վարդանի» բերդը (IX դար):

**Վայոց ձորի մարզ Եղեգնաձոր համայնք Գետափ բնակավայր**

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Գետափ բնկավայրը հիմնադրվել է 1928 թվականին: Բնակավայրը բարձր է ծովի մակերևույթից 1310 մետր: Գյուղի միջով հոսում է Եղեգիս գետը:

Աշխարհագրական դիրքը՝ նախալեռնային, կլիման բարեխառն:

Բնակչության թվաքանակը 2395 է: Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1914.1հա: Բնակչության հիմնական զբաղվածությունը՝ այգեգործություն, անասնապահություն, բանջար-բոստանային մշակաբույսերի մշակություն:

Հեռավորությունը Երևանից 120կմ, մարզկենտրոնից՝ 5կմ:

Գետափ բնակավայրում գործում են միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, բուժկետ:

Բնակավայրում կա գինու գործարան, խանութներ, հանգստյան գոտիներ՝ թվով 7, որից 5 տաղավար, 2 ռեստորանային համալիր

Հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ 1828 թվականին հայրենադարձության հուշարձան, 1915 թվականի զոհերին նվիրված խաչ, Դադայի ամրոցի ավերակները, Գյուղամիջյան մատուռ, Անդրանիկ Օզանյանի հուշարձանը:

**Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Վերնաշեն բնակավայր**

Վերնաշեն բնակավայրը գտնվում է ՀՀ Վայոց ձոր մարզում, Եղեգնաձոր համայնքի հյուսիս-արևելյան մասում, ծովի մակարդակից բարձրությունը 1450մ է: Հեռավորությունը մարզկենտրոնից 5կմ է, Երևանից՝ 125կմ: Բնակավայրի կլիման ցամաքային է, աչքի է ընկնում ձմռան մեղմ ցրտով, երկարատև ու խոնավ գարունով և երկարատև ու շոգ ամառով:

Բնակավայրի կլիման նպաստավոր է խաղողագործության զարգացման համար, որի շնորհիվ ծաղկում է ապրում գինեգործությունը, իսկ բազմաթիվ պատմամշակութային և բնական կոթողների առկայությունը հրաշալի պայմաններ է ստեղծում զբոսաշրջության զարգացման համար:

Բնակավայրում հաշվառված բնակչության թիվը՝ 1311 մարդ:

Բնակչության հիմնական զբաղվածությունը՝ գյուղատնտեսություն, մասնավորապես՝ խաղողագործություն, անասնապահություն, մեղվաբուծություն:

Վերնաշեն բնակավայրում գործում են միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, մշակույթի տուն, գրադարան: Բնակավայրը գազաֆիկացված է: Բնակավայրում գործում են գինու գործարան, պահածոների գործարան «Խնոցի» ՍՊԸ, որը զբաղվում է անասնապահությամբ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է խաղողագործությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ, բանջարանոցային մշակաբույսերի մշակությամբ, անասնապահությամբ: Բնակավայրն ունի ինչպես բարձրագույն կրթությամբ մասնագետների, այնպես էլ տարբեր բնագավառներում աշխատուժի մեծ ներուժ: Բնակավայրի վարչական տարածքում են գտնվում Թանահատի վանքը, Սուրբ խաչ եկեղեցին, միջնադարյան խաչքարեր, մատուռներ, Գլաձորի համալսարանի թանգարանը: Բնակավայրն ունի բնական տեսարժան վայրեր, հրաշալի բնություն: Պատմամշակութային և բնական կոթողների առկայությունը, բնական տեսարժան վայրերը հրաշալի պայմաններ են ստեղծում զբոսաշրջության զարգացման համար:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐԸ

*Աղյուսակ 1*

| | Տվյալը (տվյալները ձեռքբերելու անհնարինության դեպքում կարող է նշվել «Տվյալներ չկան») | 01.01.2025թ. ժամանակահատվածի դրությամբ | ...ժամանակահատվածի դրությամբ | ...ժամանակահատվածի դրությամբ |
|---|---|---|---|---|
| 1 | **Մշտական բնակչության թիվ, որից՝** | 20895 | | |
| 1.1 | Արական | 10528 | | |
| 1.2 | Իգական | 10367 | | |
| 1.3 | **Որից մինչև 18 տարեկան, որից՝** | 4301 | | |
| 1.3.1 | Արական | 2276 | | |
| 1.3.2 | Իգական | 2025 | | |
| 1.4 | **Որից 65-75 տարեկաններ, որից՝** | 2686 | | |
| **1.4.1** | Արական | 1199 | | |
| **1.4.2** | Իգական | 1487 | | |
| 1.5 | **Որից 75-ից բարձր, որից՝** | 906 | | |
| **1.5.1** | Արական | 323 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1.5.2 | Իգական | 583 | | |

*Աղյուսակ 2*

| | Տվյալը | 01.01.2025թ ժամանակահատվածի դրությամբ | | |
|---|---|---|---|---|
| | | 2025 | | |
| 2 | Տնային տնտեսությունների թիվ | 5915 | | |
| 3 | Երեխաների թիվ | 4301 | | |
| 4 | Գործազուրկներ, որից՝ | 118 | | |
| 4.1 | Կանայք | 50 | | |
| 4.2 | Աշխատաշուկայում անմրցունակ աշխատանք փնտրողներ, ընդամենը, որից՝ | 118 | | |
| 4.2.1 | Կանայք | 50 | | |
| 5 | Աշխատանք փնտրող անձանց թիվը, որից՝ | 136 | | |
| 5.1 | Կանայք | 59 | | |
| 6 | Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 1659 | | |
| 7 | Հաշվառված հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը | 41 | | |
| 8 | Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում 28.01 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների թիվը | 479 | | |
| 9 | Բազմազավակ ընտանիքների թիվը /4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվ/ | 59 | | |
| 10 | Միայնակ բնակվող տարեցների թիվը | 271 | | |
| 11* | Անժառանգ տարեցների թիվը | 103 | | |
| 12 | Միածնող ընտանիքների թիվը /ՄՄԾ-ում գրանցված ծնողներից մեկին կորցրած ընտանիքները/ | 34 | | |
| 13 | Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների թիվը | | | |
| 14 | Տեղահանված, փախստական կամ ապաստան հայցող անձանց կամ ընտանիքների թիվը | 137 ընտանիք | | |
| 15 | Կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը | 0 | | |
| 16 | Կենսաթոշակառուների թիվը | 4125 | | |
| 17 | Ընտանեկան կամ կենցաղային բռնության դեպքեր | Տվյալներ չկան | | |
| 18 | Հրատապ արձագանք պահանջող իրավիճակներից (այդ թվում՝ արտակարգ կամ ռազմական) տուժած անձանց կամ ընտանիքների թիվ | 200ընտանիք | | |
| 20 | Հոգեկան կամ մտավոր առողջության խնդիր ունեցող անձանց թիվը ընդամենը, որից՝ | Տվյալներ չկան | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20.1 | Երեխաներ | 4301 | | |

## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ և ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ

| Անվանում | Քանակ | Նկարագրություն(եթե առկա է) |
|---|---|---|
| ՆՈՒՀ-երի թիվը | 12 | Համայնքային՝ 8, մասնավոր՝ 4 |
| ԲԿ-ների թիվը | 1 | |
| ԱԱՊ և ամբուլատորիա | 2 | Ինչպես նաև ԲՄԿ՝ 3 |
| Մշակույթի/Արվեստի դպրոցների թիվը | 4 | |
| Սպորտդպրոցների թիվը | 2 | |
| Արտադպրոցական կրթական հաստատությունների թիվը | 4 | Համայնքային՝ 2, պետական՝ 1, մասնավոր՝ 1 |
| Սոցիալական ուղղվածությամբ ՀԿ-ների թիվը | 8 | |
| Համայնքի բալանսում առկա չօգտագործվող շինությունների թիվը | 0 | |
| Սոցիալական բնակարանների թիվը | 0 | |
| Համայնքում ԲՈՒՀ-երի թիվը | 0 | |
| Այլ | 5 | Գրադարան, որից համայնքային՝ 4, մարզային՝ 1<br>Քոլեջ՝ 1 (պետական) |

### Այլ տվյալներ

| 1. Տրանսպորտային հաղորդակցություն | |
|---|---|
| Տրանսպորտային կապը մարզկենտրոնի հետ (Երևանի դեպքում չի լրացվում)՝ | Եղեգնաձոր քաղաքը, որը համայնքի վարչական կենտրոնն է, նաև մարզկենտրոնն է: Տրանսպորտային կապը Եղեգնաձորի և մյուս բնակավայրերի միջև ապահովվում է մասնավոր կազմակերպությունների կողմից և գործում է կանոնավոր կերպով: Վարչական կենտրոնի և բնակավայրերի միջև հեռավորրությունը 3-8 կմ է: |
| Տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ՝ (Երևանի դեպքում չի լրացվում)՝ | Ծառայությունը մատուցվում է մասնավոր կազմակերպությունների կողմից: Հեռավորությունը մայրաքաղաքից 130 կմ է: |
| Ներհամայնքային տրանսպորտ՝ | Համայնքային տրանսպորտ առկա չէ: Տրանսպորտային կապը |

| | |
|---|---|
| | Եղեգնաձորի և մյուս բնակավայրերի միջև ապահովվում է մասնավոր կազմակերպությունների կողմից և գործում է կանոնավոր կերպով: |
| Տրանսպորտային կապը հարևան համայնքի հետ՝ | Որպես մարզկենտրոն բոլոր համայնքների հետ տրանսպորտային կապն առկա է: |
| **2. Տնտեսական ներուժը** | |
| Համայնքում սոցիալական պատասխանատվություն ցուցաբերած մասնավոր կազմակերպություններ | |
| Համայնքում խոշոր հարկատուների առկայություն՝ | 4 |
| Այլ | |
| **3. Սոցիալական աջակցության պետական կառույցները համայնքում** | |
| Համայնքում պետական դրամաշնորհով սոցիալական ծառայություններ | 2 («Դու մենակ չես» կանանց աջակցման կենտրոն, Կարմիր Խաչ) |
| Համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող պետական հաստատություններ (ՄՍԾ ՏԿ, ՊՈԱԿ, այլ) | 2 (ՄՍԾՏԿ, Կարմիր Խաչ) |
| Սոցիալական ծառայություններ տրամադրող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների առկայությունը և տրամադրվող ծառայությունները | |
| Այլ | |
| **4. Սոցիալական աջակցության ոլորտի ՔՀԿ-ներ** | |
| Համայնքում սոցիալական ուղղվածությամբ ՀԿ-ներ | 8 |
| Համայնքում սոցիալական խմբերի ներկայացուցիչների ոչ ֆորմալ նախաձեռնություն՝ | |
| Սոցիալական տարբեր խմբերի շահերը պաշտպանող ՔՀԿ-ներ | 4 |
| Միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացուցչություններ | 2 |
| իրավապաշտպան, տեղեկատվական թեժ-գծեր կամ վստահության հեռախոսահամարներ | 1 |

| | |
|---|---|
| Համայնքում բարեգործական հիմնադրամներ | |
| Այլ | |
| **5. Սոցիալական ծառայությունների էկոհամակարգը համայնքում** | |
| Համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպություններ | 0 |
| Համայնքում սոցիալական ծառայությունների մատուցող ՔՀԿ-ներ | 8 («Սյունիք զարգացում» ՀԿ, Առաքելություն Հայաստան, ACTED, ՀԲԸՄ, ՄԱԿ, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ, Կարմիր Խաչ, «Դու մենակ չես» կանանց աջակցման կենտրոն) |
| Այլ | |
| Սոցիալական ծառայությունների նախորդ տարիների փորձառութունը *(ներկայացնել վերջին երեք տարվա ընթացքում համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրած կազմակերպությունների փվյալները և տրամադրած ծառայությունները, որոնց գործունեությունը փվյալ պահին դադարեցված է կամ ավարտված, նշել նաև դադարեցման պատճառները և շարունակականությունն ապահովելու նպատակահարմարությունը)* | |

## IV. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

| Ոլորտը | Մասնագետներ | Տվյալներ, ( եթե առկա են) |
|---|---|---|
| Սոցիալական | 1. Սոցիալական աշխատողներ | 17 |
| | 2. Սոցիալական մանկավարժ | 10 |
| | 3. Սոցիալական սատարողներ և սոցիալական սպասարկման այլ մասնագետներ | 6 |
| Հոգեբանական | 4. հոգեբան | 16 |
| | 5. մանկական հոգեբան | 0 |

| | | |
|---|---|---|
| | 6. հոգեթերապևտ | 1 |
| Բժշկական | 7. Վերականգնողաբան | 1 |
| | 8. Նյարդաբան | 2 |
| | 9. Հոգեբույժ | 2 |
| | 10. այլ (նշել) | |
| Իրավական | 11. Փաստաբաններ | 6 |
| | 12. Իրավաբաններ | 4 |
| | 13. Իրավախորհրդատու | 10 |
| Կրթական-մասնագիտական | Կրթական ծրագրերով զբաղվող մասնագետներ, կարիերայի կենտրոններ, մասնագիտական կողմնորոշման մասնագետներ և այլ( քոլեջներ և ՄՍԾ) | 15 |
| Հարբժշկական | | |
| | Կինեզիոլոգ | 3 |
| | Էրգոթերապիստ | 0 |
| | Օրթեզիստ | 0 |
| | Պրոթեզիստ | 0 |
| | Լոգոպեդ | 5 |
| | Հատուկ մանկավարժ | 5 |
| | Սուրդոմանկավարժ | 2 |
| | Տիֆլոմանկավարժ | 2 |
| | Արտ-թերապիստ | 2 |
| | Խաղաթերապիստ | 2 |
| | Դիաբետի դպրոցի մասնագետ | 0 |
| | | |

# V. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ և ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| *S- Ուժեղ կողմեր* | *W- Թույլ կողմեր* |
|---|---|
| • Բնական և պատմամշակութային հարուստ ռեսուրսներ և միջնադարյան հայտնի պատմամշակութային կոթողներ<br>• Գինու, պանրի (հատկապես այծի պանիր), չրի պահածոների արտադրության ամբողջական արտադրական շղթաների առկայություն<br>• Հայաստանի առաջատար գինեգործական-զբոսաշրջային կլաստերների կենտրոն | • Գործազրկության բարձր մակարդակ<br>• Որակյալ կադրերի արտահոսք<br>• Տարբեր ենթակառուցվածքների թերի վիճակ<br>• Կրթական կենտրոնների բացակայություն<br>• Մշակութային ժամանցային կենտրոնների բացակայություն |

| | |
|---|---|
| • Որպես մարզկենտրոն մարզային նշանակության կառույցների կենտրոնացումը Եղեգնաձոր քաղաքում<br>• Հասարակական մի քանի կազմակերպությունների ակտիվ գործունեություն<br>• Կիրառական արվեստի յուրահատուկ արհեստանոցների և մասնագետների առկայություն | |
| **O - Հնարավորություններ** | **T- Սպառնալիքներ** |
| • Աշխարհագրական դիրք՝ Եղեգնաձորով է անցնում միջպետական նշանակության ճանապարհը<br>• Բնական և պատմամշակութային հարուստ ժառանգություն<br>• Տարածաշրջանում գինեգործության, զբոսաշրջության զարգացման բարձր տեմպեր<br>• Մարզում կազմակերպվող փառատոններ՝ Արենու գինու փառատոն, Խաչիկի գաթայի փառատոն, Ջերմուկի ծիրանի փառատոն<br>• Համագործակցություն հանրապետական կամ միջազգային նշանակության ՀԿ-ների և կառույցների հետ | • Ադրբեջանական ագրեսիայի ռիսկ<br>• Բնակչության, հատկապես երիտասարդների արտագաղթ<br>• Ծնելիության ցածր մակարդակ<br>• Պետական և համաշխարհային մակարդակներում անկայուն իրավիճակ |

## VI. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը, համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը: Ապահովել խոցելի ընտանիքների բնակիչների բարեկեցիկ կյանքը համայնքային սոցիալական աշխատանքի խթանման միջոցով, խոցելի ընտանիքների տնտեսական դիմակայունության բարձրացման (գյուղական բնակավայրերում անասնապահություն, ջերմոցային տնտեսությունների ստեղծում, մասնագիտական կարողությունների զարգացում), հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հնարավորության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների ընդլայնման, հատուկ կարիքներով մեծահասակների ցերեկային խնամքի ծառայությունների ստեղծման միջոցով և այլն:

Պետության պաշտպանության իրականացման աջակցումը, աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

Համայնքի առաջնային խնդիրներից են անվտանգությունը, քաղաքացիական պաշտպանությունը, աղետների ռիսկերի կառավարումը:

Նախատեսվում է՝

Բարձրացնել քաղաքացիական պաշտպանության արդյունավետությունը և ապահովել բնակչության լիարժեք պատսպարումը, կառուցել նոր ապաստարաններ:

Բարեգործության խթանումը համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

**ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

*Ստորև՝ ենթածրագրերի միջոցով, ներկայացվում է համայնքային սոցիալական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված առաջարկներ, որոնց նպատակն է լուծել բնակչության սոցիալական պաշտպանության խնդիրը Եղեգնաձոր համայնքում:*

# VII. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ (ԱՆՁՆԱԳԻՐ)

## 1. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 1՝ բնաիրային աջակցության տրամադրում

<table>
<tr><td colspan="2">Անվանումը՝ բնաիրային աջակցության տրամադրում</td></tr>
<tr><td>Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td>Բնակչության սոցիալական պաշտպանություն</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակը</td><td>Բնաիրային աջակցության տրամադրում՝ դրամական հատուցմամբ, դեղորայքի, սննդի, հիգիենայի պարագաների, հագուստի, կոշիկի, կենցաղային անհրաժեշտ այլ իրերի ձեռքբերման համար:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական արդյունքները</td><td>Դիմումատու ընտանիքներ, ովքեր հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակում և չեն կարող սեփական ուժերով հաղթահարել այդ իրավիճակը, կստանան բնաիրային աջակցություն՝ համաձայն կարիքի գնահատման արդյունքների:
<table>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="2">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td>160</td><td>50</td><td>110</td></tr>
</table></td></tr>
<tr><td>Ծրագրի միջանկյալ արդյունքները</td><td>Այն ընտանիքները, ովքեր հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակում և չեն կարող սեփական ուժերով հաղթահարել այդ իրավիճակը, կստանան բնաիրային աջակցություն՝ համաձայն կարիքի գնահատման արդյունքների:
<table>
<tr><td rowspan="2"></td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td>2026 /1-ին կիսամյակ/</td><td>2026 /2-րդ կիսամյակ/</td></tr>
</table></td></tr>
</table>

| | |
|---|---|
| | 160 \| 50 \| 50 \| 60 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1. Ֆինանսական հատուցումները իրականացվելու են համայնքային բյուջեի «Նպաստներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին,<br>2. մատակարարումներ իրականացնող կազմակերպություններն ընտրվելու են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հրապարակային օֆերտայի հիման վրա, նախապես կնքված պայմանագրերին համապատասխան:<br>3. ձեռքբերումների ցանկը համապատասխանում է Հանձնաժողովի կողմից որոշված և ավագանու կողմից հաստատված հատուցման տեսակին,<br>4. համայնքապետարանի կողմից տրամադրված հատուցման չափը չպետք է գերազանցի Հանձնաժողովի կողմից հաստատված հատուցման ենթակա գումարի չափին,<br>5. ձեռքբերված ապրանքների դիմաց վճարումները համայնքապետարանն իրականացնում է ծառայություն մատուցած կամ մատակարար կազմակերպություններին՝ իրենց կողմից կոնկրետ անձի մասով ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա:<br>6. կազմակերպություններին տրամադրված դրամական հատուցումները կարող են լինել դրանց կողմից մատուցված ծառայությունների կամ տրամադրված ապրանքների դիմաց ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով կատարված դրամական փոխանցումների միջոցով: |
| Ծրագրի բյուջեն | Յուրաքանչյուր տարվա համար 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | - |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ծրագրի համար նախատեսված բյուջեն կարող է չբավականացնել բնակիչների կողմից ներկայացվող դիմումներին: |
| Ծրագրի հիմնական շահառուները | Հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված տեղացի և տեղահնված ընտանիքներ, ընտանիքի անդամներ |

| | |
|---|---|
| Ծրագրի սկիզբը և ավարտը | 2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30 |
| Ծրագրի համառոտ նկարագրությունը | Բնաիրային հատուցման չափը սահմանել առավելագույնը **30000 (երեսուն հազար)** ՀՀ դրամ: ***Բնաիրային աջակցության տրամադրում՝ դրամական հատուցմամբ, դեղորայքի, սննդի, հիգիենայի պարագաների, հագուստի, կոշիկի, կենցաղային անհրաժեշտ այլ իրերի ձեռքբերման համար:*** |

**Ֆինանսավորման սխեմա՝ Ենթածրագիր 1**

| Միջոցառումներ | Գնահատված ծախսեր | Ֆինանսավորման աղբյուր | | | | Ֆինանսավորման պակաս | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տեղական բյուջե | Պետական, ռեգիոնալ բյուջեներ | Ձեռնարկություններ | Դոնորներ | | |
| Դիմումի ուսումնասիրություն, կարիքի գնահատում | 0 | - | - | - | - | - | - |
| Համայնքի ղեկավարի որոշման կայացման փուլ | 0 | - | - | - | - | - | - |
| Հատուցման տրամադրման գործընթացի ապահովում | 0 | - | - | - | - | - | - |

**Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 1**

| Գործողություններ / նախագծերի գաղափարներ | Տևողություն (սկիզբ / ավարտ) | Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ | Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ | Ակնկալվող արդյունքներ երկարաժամկետ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Բնաիրային աջակցության տրամադրում՝ դրամական հատուցմամբ,* | 2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30 | 2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը | 2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը | 2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը |

## 2. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2՝ ուսման վարձավճարների հատուցում

<table>
<tr><td colspan="6">Անվանումը՝ ուսման վարձավճարների հատուցում</td></tr>
<tr><td>Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="5">Բնակչության սոցիալական պաշտպանություն</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակը</td><td colspan="5">Ուսման վարձավճարների հատուցում՝ ուսումնական հաստատություններին համապատասխան հիմքերի և փաստաթղթերի, անդորրագրերի ներկայացման դեպքում և Հանձնաժողովի հատուկ եզրակացության հիման վրա:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի հիմնական արդյունքները</td><td colspan="5">Վարձավճարների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքներ</td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td colspan="2">2026</td></tr>
<tr><td>5</td><td>5</td><td colspan="2">5</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքները</td><td colspan="5">Վարձավճարների հատուցումից օգտված, հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված տվյալ ժամանակահատվածի ընթացքի համար դիմում ներկայացրած ընտանիքներ</td></tr>
<tr><td rowspan="3"></td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td>2026 /1-ին կիսամյակ/</td><td>2026 /2-րդ կիսամյակ/</td></tr>
<tr><td>5</td><td>5</td><td>2</td><td>3</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="5">Ուսման վարձավճարների հատուցում, այն ընտանիքների անդամների համար, որոնք հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակում:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Ծրագրի բյուջեն | Յուրաքանչյուր տարվա համար՝ 500000 / հիգ հարյուր հազար/ ՀՀ դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | – |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | **Պետության կողմից սահմանված ուսման վարձի վճարման արտոնություններից օգտվելու մասին փաստերի մասին համապատասխան տեղեկատվության ձեռքբերումը** |
| Ծրագրի հիմնական շահառուները | **3-րդ կամ 4-րդ կուրսում գտնվող միջինից բարձր առաջադիմություն ունեցող այն ուսանողները, որոնց ընտանիքներ ընտանիքներըը հայտնվել է հրատապ արձագանք պահանջող կյանքի դժվարին իրավիճակում: Ընտանիքը կարող է օգտվել ուսման վարձավճարի հատուցումից, եթե չի օգտվում պետության կողմից սահմանված ուսման վարձի վճարման արտոնություններից:** |
| Ծրագրի սկիզբը և ավարտը | 2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30 |
| Ծրագրի համառոտ նկարագրությունը | **Ուսման վարձավճարի հատուցման չափը սահմանել առավելագույնը 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:**<br>**Ուսման վարձավճարների հատուցում, որից կարող են օգտվել 3-րդ կամ 4-րդ կուրսում գտնվող միջինից բարձր առաջադիմություն ունեցող այն ուսանողները, որոնց ընտանիքները հայտնվել է հրատապ արձագանք պահանջող կյանքի դժվարին իրավիճակում: Ընտանիքը կարող է օգտվել ուսման վարձավճարի հատուցումից, եթե չի օգտվում պետության կողմից սահմանված ուսման վարձի վճարման արտոնություններից:** |

**Ֆինանսավորման սխեմա՝ Ենթածրագիր 2**

| Միջոցառումներ | Գնահատված ծախսեր | Ֆինանսավորման աղբյուր | | | | Ֆինանսավորման պակաս | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տեղական բյուջե | Պետական, ռեգիոնալ բյուջեներ | Ձեռնարկություններ | Դոնորներ | | |
| Դիմումի | 0 | - | - | - | - | - | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ուսումնասիրություն, կարիքի գնահատում | | | | | | | |
| Հանձնաժողովի որոշման կայացման փուլ | 0 | - | - | - | - | - | - |
| Հատուցման տրամադրման գործընթացի ապահովում | 0 | - | - | - | - | - | - |

**Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 2**

| Գործողություններ / նախագծերի գաղափարներ | Տևողություն (սկիզբ / ավարտ) | Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ | Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ | Ակնկալվող արդյունքներ երկարաժամկետ |
|---|---|---|---|---|
| Ուսման վարձավճարի հատուցում | 2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30 | 2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը | 2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը | 2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը |

3. **ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 3՝** բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ

| | |
|---|---|
| **Անվանումը՝** ***բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ*** | |
| Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Բնակչության սոցիալական պաշտպանություն |
| Ծրագրի անմիջական նպատակը | ***Բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ*** |

<table>
<tr><td rowspan="4">Ծրագրի հիմնական արդյունքները</td><td colspan="5">Կատարված հատուցումներից կարող են օգտվել այն ընտանիքները, որոնք հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում և չեն օգտվում պետության կողմից սահմանված վճարման արտոնություններից</td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td colspan="2">2026</td></tr>
<tr><td>10</td><td>10</td><td colspan="2">10</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքները</td><td colspan="5">Բժշկական ծառայությունների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքներ</td></tr>
<tr><td rowspan="3"></td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td>2026 /1-ին կիսամյակ</td><td>2026 /2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td>10</td><td>10</td><td>5</td><td>5</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="5">Բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ, որոնք փոխանցվելու են համապատասխան կազմակերպություններին:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="5">Յուրաքանչյուր տարվա համար՝ 1 500 000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="5">-</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="5">Բնակիչների կողմից ներկայացվող դիմումների քանակը կարող է գերազանցել ծրագրի համար նախատեսված բյուջեին:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="5">Բժշկական ծառայությունների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբը և ավարտը</td><td colspan="5">2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30</td></tr>
</table>

**Ֆինանսավորման սխեմա՝ Ենթածրագիր 3**

<table>
<tr><th rowspan="2">Միջոցառումներ</th><th rowspan="2">Գնահատված ծախսեր</th><th colspan="4">Ֆինանսավորման աղբյուր</th><th>Ֆինանսավորման պակաս</th><th>Նշումներ</th></tr>
<tr><th>Տեղական բյուջե</th><th>Պետական, ռեգիոնալ բյուջեներ</th><th>Ձեռնարկություններ</th><th>Դոնորներ</th><th></th><th></th></tr>
<tr><td>Դիմումի</td><td>0</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td></tr>
</table>

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ուսումնասիրություն, կարիքի գնահատում | | | | | | | |
| Հանձնաժողովի որոշման կայացման փուլ | 0 | - | - | - | - | - | - |
| Հատուցման տրամադրման գործընթացի ապահովում | 0 | - | - | - | - | - | - |

**Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 3**

| Գործողություններ / նախագծերի գաղափարներ | Տևողություն (սկիզբ/ ավարտ) | Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ | Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ | Ակնկալվող արդյունքներ երկարաժամկետ |
|---|---|---|---|---|
| **Բժշկական ծառայությունների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքների աջակցություն** | 2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30 | 2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը | 2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը | 2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը |

## 4. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 4՝ բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում

| Անվանումը՝ *բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում* | |
|---|---|
| Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Բնակչության սոցիալական պաշտպանություն |
| Ծրագրի անմիջական նպատակը | ***Բնակարանային պայմանների բարեկարգման*** |

<table>
<tr><td></td><td colspan="5">աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի հիմնական արդյունքները</td><td colspan="5">Աշխատանքների իրականացման արդյունքում ընտանիքների անդամների կենսագործունեության անվտանգության ապահովում կամ կենսական կարևոր կարիքների բավարարում</td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td colspan="2">2026</td></tr>
<tr><td>3</td><td>3</td><td colspan="2">3</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքները</td><td colspan="5"></td></tr>
<tr><td rowspan="3"></td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td>2026 /1-ին կիսամյակ/</td><td>2026 /2-րդ կիսամյակ/</td></tr>
<tr><td>3</td><td>3</td><td>2</td><td>1</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="5">Բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="5">Յուրաքանչյուր տարվա համար՝ 500000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="5">-</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="5">-</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="5">3</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբը և ավարտը</td><td colspan="5">2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրությունը</td><td colspan="5">Հատուցման չափը սահմանել առավելագույնը 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ կախված կարիքից:<br>Ընտանիքը գտնվում է հրատապ արձագանք պահանջող իրավիճակում և առաջացած բնակարանային խնդիրները կամ առկա պայմանները կարող են ազդել փվյալ իրավիճակում ապրող ընտանիքի անդամների կենսագործունեության անվտանգության ապահովման կամ կենսական կարևոր կարիքների բավարարման վրա:</td></tr>
</table>

**Ֆինանսավորման սխեմա՝ Ենթածրագիր 4**

| Միջոցառումներ | Գնահատված ծախսե | Ֆինանսավորման աղբյուր | Ֆինանսավորման | Նշումներ |
|---|---|---|---|---|

| | ր | | | | | պակաս | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տեղակ ան բյուջե | Պետակա ն, ռեգիոնալ բյուջեներ | Ձեռնա րկությ ուններ | Դոնո րներ | | |
| Դիմումի ուսումնասիրություն, կարիքի գնահատում | 0 | - | - | - | - | - | - |
| Հանձնաժողովի որոշման կայացման փուլ | 0 | - | - | - | - | - | - |
| Հատուցման տրամադրման գործընթացի ապահովում | 0 | - | - | - | - | - | - |

**Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 4**

| Գործողություններ / նախագծերի գաղափարներ | Տևողություն (սկիզբ / ավարտ) | Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ | Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ | Ակնկալվող արդյունքնե ր երկարաժա մկետ |
|---|---|---|---|---|
| **Բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծառայությունների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքների աջակցություն** | 2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30 | 2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը | 2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը | 2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուներ ի թիվը և բյուջեի ծախսը |

## 5. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 5՝ համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների վարձերի նկատմամբ արտոնության սահմանում

| **Անվանումը՝ *Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների վարձերի նկատմամբ արտոնության սահմանում*** | |
|---|---|
| Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Բնակչության սոցիալական պաշտպանություն |
| Ծրագրի անմիջական նպատակը | Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հնարավորություն տալ հաճախել նախադպրոցական ուսումնական հաստատություն | | | | |
| Ծրագրի հիմնական արդյունքները | Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հաճախելիության ավելացում | | | | |
| | Շահառուների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ (ըստ տարիների) | | |
| | | 2025 | 2025 | 2026 | |
| | | 40 | 40 | 40 | |
| Ծրագրի միջանկյալ արդյունքները | Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հաճախելիության ավելացում | | | | |
| | | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ (ըստ տարիների) | | |
| | | 2025 | 2025 | 2026 /1-ին կիսամյակ/ | 2026 /2-րդ կիսամյակ/ |
| | | 40 | 40 | 40 | 40 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | Արտոնությունը սահմանվելու է ավագանու որոշմամբ՝ Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հատուկ եզրակացության հիման վրա։<br><br>Ներկայացված դիմումների ուսումնասիրության գործընթացին համայնքապետարանի աշխատակիցներին մասնակցում է նաև տվյալ հաստատության տնօրենը։ | | | | |
| Ծրագրի բյուջեն | - | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | - | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | - | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ | | | | |
| Ծրագրի սկիզբը և ավարտը | 2025 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30 | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրությունը | ***Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների վարձերի նկատմամբ արտոնության սահմանում սոցիալապես անապահով այն ընտանիքների համար, որտեղ կա՝***<br><br>***ա) 2 կամ ավելի մանկապարտեզ հաճախող երեխա և երեխաների ծնողը կամ ծնողներն ունեն հաշմանդամության առաջին կամ երկրորդ խումբ կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում,***<br><br>***բ) 3 և ավել անչափահաս երեխա,*** | | | | |

| | |
|---|---|
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 48,844.6 | 48,844.6 | | 7,100.0 | 7,100.0 | | | 8,100.0 | | 1,000.0 | 1,000.0 | 0.0 | | 9,945.2 | | 3,800.0 | 3,800.0 | | |

Հավելված N 2
ՀՀ Վայոց ձորի մարզի
Եղեգնաձորի համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի 20-ի թիվ 84 Ա որոշման

ՀՀ համայնքների 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի պակացուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորումը ըստ աղբյուրների

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | 2024 փաստացի | | | 2025 հաստատված | | | 2026 թվական | | | 2026թ կանխատեսված և 2025թ. հաստատված բյուջեի տարբերություն | | | 2027 թվական | | | 2028 թվական | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | 2026թ կանխատեսված և 2025թ. հաստատված բյուջեի տարբերության վերաբերյալ հիմնավորումներ |
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 8010 | *ԸՆԴԱՄԵՆԸ`* | | 110416 | 138781.5 | -28365.5 | 240623.1 | | 240623.1 | (170,900.0) | | (170,900.0) | 69,723.1 | | 69,723.1 | (192,700.0) | | (192,700.0) | (171,050.0) | | (171,050.0) | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8100 | *Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ* | | | | | 240623.1 | | 240623.1 | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8110 | *1. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8120 | 1.2. Վարկեր և փոխատվություններ (ստացում և մարում) | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8121 | 1.2.1. Վարկեր | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8122 | - վարկերի ստացում | 9112 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | որից` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8124 | *այլ աղբյուրներից* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8160 | *2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ* | | | | | 240623.1 | | 240623.1 | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8161 | 2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8164 | *Բաժնետոմսերի եվ կապիտալում այլ մասնակցության ձեռք բերում* | 6213 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8190 | *2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը`* | | | | | | | 240623.1 | | | | | | | | | | | | | |
| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8191 | 2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ | 9320 | | | | 138780.4 | 138780.4 | | | | | | | | | | | | | | |
| | որից` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8192 | *- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8193 | *- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8194 | 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ | 9330 | | | | 240623.1 | | 240623.1 | | | | | | | | | | | | | |
| | որից` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8195 | *- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի* | | | | | 101842.7 | | 101842.7 | | | | | | | | | | | | | |
| 8196 | *- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը* | | | | | 138780.4 | | 138780.4 | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | - Բնակարանային նպաստներ բյուջեից | 4728 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | - Այլ ծախսեր | 4861 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | *7. Արտակարգ իրավիճակներում և ծանրատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | - Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | - Այլ ծախսեր | 4861 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3090 | 10 | 9 | 0 | *Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | որից` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3092 | 10 | 9 | 2 | Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | *1. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | *2. Առողջության ապահովագրություն* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | - Ապահովագրական ծախսեր | 4215 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3100 | 11 | 0 | 0 | *ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎԱԾ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ* | | *0.0* | *8,510.0* | *0.0* | 38,325.8 | *38,325.8* | *0.0* | *112,042.6* | *112,042.6* | *0.0* | *73,716.8* | 73,716.8 | 0.0 | *186,904.0* | *186,904.0* | *0.0* | *205,017.2* | *205,017.2* | | |
| | | | | այդ թվում` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | | *0.0* | *8,510.0* | *0.0* | 38,325.8 | *38,325.8* | *0.0* | *112,042.6* | *112,042.6* | *0.0* | *73,716.8* | 73,716.8 | 0.0 | *186,904.0* | *186,904.0* | *0.0* | *205,017.2* | *205,017.2* | | |
| | | | | որից` | | | | | | | | | | | 0.0 | 0.0 | | | | | | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | 0.0 | 8,510.0 | 0.0 | 38,325.8 | 38,325.8 | 0.0 | 112,042.6 | 112,042.6 | 0.0 | 73,716.8 | 73,716.8 | 0.0 | 186,904.0 | 186,904.0 | 0.0 | 205,017.2 | 205,017.2 | | |
| | | | | այդ թվում` | | | | | | | | | | | 0.0 | 0.0 | | | | | | | | |
| | | | | - Պահուստային միջոցներ | 4891 | 0.0 | 8,510.0 | 0.0 | 38,325.8 | 38,325.8 | 0.0 | 112,042.6 | 112,042.6 | | 73,716.8 | 73,716.8 | 0.0 | 186,904.0 | 186,904.0 | | 205,017.2 | 205,017.2 | | |
| | | | | -Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե | x | | | | | | | | | | | | | | | | | | | |

# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2026-2028 ԹԹ
# ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ
# ԾՐԱԳԻՐ



## Եղեգնաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր

## Բովանդակություն


1. Ներածություն---------------------------------------------------------------3
2. Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները----------------4
3. Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող եկամուտները --- 6
4. Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների -------------------7
5. Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող ծախսերը --------- 8
6. Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների------------------10
7. Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող դեֆիցիտը -------- 12

# Ներածություն

Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Եղեգնաձոր համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է Եղեգնաձոր համայնքի կանխատեսվող առաջիկա 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք կնպաստեն Եղեգնաձոր համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որն իր հերթին կավելացնի համայնքի զարգացմանը միտված ծախսերը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որն ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում համայնքի բնակիչներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումն ըստ ոլորտների՝ թվային ցուցանիշներով: Ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվեն բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով, ինչպես նաև համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծրագրերի նախագծերը կազմելու մեթոդական ցուցումներով:

## Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. համար ՄԺԾԾ ծրագրերի իրականացումը նպատակաուղղվելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:
5. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
6. Առողջ, անվտանգ և հարմարավետ ապրելու և գործելու միջավայրի ստեղծումը:
7. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
8. Զբոսաշրջության ենթակառուցվածնքերի զարգացման խթանումը և Եղեգնաձոր համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
9. Նախադպրոցական հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
10. Նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգումը:
11. Եղեգնաձոր համայնքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
12. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում:

13. Տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը:
14. Եղեգնաձոր համայնքի ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:
15. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:
16. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
17. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի:
18. Կապիտալ ներդրումներ կատարել ճանապարհային տնտեսության բնագավառներում, ավելացնել փողոցային լուսավորությունը, առկա լուսավորության համակարգը փոխարինելով էներգախնայող լուսատուներով:
19. Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը:
20. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
21. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
22. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:
23. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

## Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող եկամուտները

Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. Եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 983 313.2; 1 117 376.2; և 1 124 865.8.0 հազ. դրամ: Եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում: Եղեգնաձոր համայնքի սեփական եկամուտների դինամիկան, հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով սեփական եկամուտների կազմում հիմնանական աճը նախատեսվում է անշարժ գույքի հարկի մասով եկամտատեսակից:



## Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների

Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. եկամուտների կազմում՝ սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 269280.2; 279537.2 և 270801. հազ. դրամ:

2026-2028թթ. ՄԺԺԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

- Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 46830; 48720 և 52144 հազ. դրամ
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 120570.2; 124850 և 125050 հազ. դրամ
- Գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 13 420; 14 500 և 14 935 հազ. դրամ
- Վարչական գանձումներ՝ 68 670; 69 404 և 62569.2 հազ. դրամ, որից՝
- Աղբահանության վճարներ՝ 27 450; 27 999 և 28 560 հազ. դրամ
- Պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան, նախնական կանխատեսմամբ նախատեսվում է միջինը 8% աճ, իսկ պետության կողմից Եղեգնաձոր համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման համար տվող հատկացումը կանխատեսվում է համապատասխանաբար՝ 1 999, հազ. դրամ

## Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող ծախսերը

Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 1 154 213.2; 1 310 076.2 և 1 295 915.8 հազ. դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսերի քաղաքականության և նպատակներին հասնելու սկզբնաղբյուրն է հանդիսանում Եղեգնաձոր համայնքապետարանի պահպանման ծախսերի համատեքստում ստանալ այնպիսի մարդկային ռեսուրս, որը ի վիճակի կլինի համապատասխան ծառայությունները մատուցել՝ լուծելով համայնքի առջև դրված կայուն զարգացման պահանջը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Ընդհանուր ծախսերն ըստ բյուջետային տնտեսագիտական դասակարգման բնույթների կարելի է նկարագրել հետևյալ խմբերով.

- Աշխատանքի վարձատրություն՝ 209 450; 230 395 և 253 434.5 հազ. դրամ
- Ծառայությունների և ապրանքների

  ձեռք բերում՝ 61 286.5; 64 067.2 և 68 298.1 հազ. դրամ
- Սուբսիդիաներ և դրամաշնորհներ՝ 522 908; 543 830.3 և 570 017.8 հազ. դրամ
- Նպաստներ՝ 4 800; 5 000 և 5 250 հազ. դրամ
- Այլ ծախսեր՝ 2 850.0; 2 950.0 և 3 063.2 հազ. դրամ
- Հիմնական միջոցներ՝ 170 900; 192 700 և 164 250 հազ. դրամ

# Եղեգնաձոր համայնքի 2026-2028 թթ բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի



## Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների

Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը կայանում է Եղեգնաձոր համայնքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում առաջացած խնդիրների լուծման տեսլականներով, և այն առավել մատչելի ձևով ներկայացված է բյուջետային դասակարգման գործառական խմբերում, մասնավորապես դրանք ըստ բաժինների բաշխված են հետևյալ կերպ.

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ համապատասխանաբար՝

  339406; 375360.6 և 366 824.4 հազ. դրամ
- Պաշտպանություն՝ 350 00 հազարական դրամ յուրաքանչյուր տարի.
- Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 650 հազարական դրամ յուրաքանչյուր տարի
- Տնտեսական հարաբերություններ՝ 89728; 98384.4 և 105831.8 հազ. դրամ
- Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ 143455.5, 155173.7 և 133171.9 հազ. դրամ
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ 45064.1; 50567.3 և 61374 հազ. դրամ
- Հանգիստ, մշակույթ և կրոն՝ 7050; 7270 և 7450 հազ. դրամ
- Կրթություն՝ 411667; 431005.3 և 437392.3 հազ. դրամ
- Սոցիալական պաշտպանություն՝ 4 800, 5 000 և 5 250 հազ. դրամ
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 112 042.6; 73716.8 և 186904

## Եղեգնաձոր համայնքի 2026-2028 թթ. բյուջեի գործառական դասակարգում տոկոսային հարաբերությամբ

### 2026




### 2027




### 2028




Ընդհանուր բնույթի
հանրային ծառայություններ
Պաշտպանություն
Տնտեսական
հարաբերություններ
Շրջակա միջավայրի
պաշտպանություն
Բնակարանային
շինարարություն
Առողջապահություն
Հանգիստ, մշակույթ և կրոն
Կրթություն
Սոցիալական պաշտպանություն
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

## Եղեգնաձոր համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող դեֆիցիտը

2026-2028թթ կանխատեսվող դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմում արտացոլված են՝ ներգրավված վարչական մասից ֆոնդային մաս անցնող և հենց ֆոնդային մասում կանխատեսվող բյուջետային միջոցները, ինչպես նաև Եղեգնաձոր համայնքի ենթակայության տակ գտնվող կազմակերպություններում կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղվող բյուջետային ելքերը, որի ընդհանուր պատկերով 2026-2028թթ. կանխատեսվող դեֆիցիտը կազմում է 170 900, 192 700 և 164 250 հազ. դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 85-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ) ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և համաձայն 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր

Հավելված
Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի 20-ի թիվ 85-Ա որոշման

# ԾՐԱԳԻՐ

## ԵՂԵԳՆԱՁՈՐՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.**Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորհամայնքի (այսուհետ՝ Համայնք) սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025թվականի (ամենամյա) ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի (այսուհետ՝ Հողեր) օգտագործման արդյունավետության բարձրացման և համայնքի հողային պաշարների կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված խնդիրների լուծմանը և հանդիսանում է ՀՀԶԾ-ի բաղկացուցիչ մասը:

**2.** Ծրագրի իրականացման հիմքում դրվել են 2025թվականի ընթացքում Հողերի նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ գույքագրման, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, Հողերի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրները:

**3.** Ծրագրի իրականացման իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Հրապարակային սակարկությունների մասին», «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքները, հողային հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, ինչպես նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված Հողերի կառավարման ոլորտի վերաբերյալ իրավական ակտերը:

**4.** Հողերը տնօրինում է համայնքի ավագանին՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով, այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

**5.** Հողերի կառավարման հարաբերությունների կարգավորումը ներառում է՝
1) Հողերի կառավարման հիմնախնդիրների լուծումը.
2) Հողերի հաշվառման բնագավառում միասնական սկզբունքների սահմանումը և անշարժ գույքի հաշվառման բազայում Հողերի ամբողջական ընդգրկումը, ինչպես նաև

հաշվառման տվյալների ճշգրտության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ընտրանքային ուսումնասիրությունների անցկացումը.

3) Հողերի մշտադիտարկումը (մոնիթորինգ), օգտագործումը և պահպանումը, Հողերի շրջանառության նպատակի իրականացումը.

4) Հողերի կառավարման բնագավառում համայնքային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ուղղությունների սահմանումը.

5) Հողերի օտարման և օգտագործման ոլորտում համայնքային քաղաքականության մշակումը և իրականացումը.

6) Հողերի գույքային իրավունքների կառավարման ոլորտում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը:

**6.** Ծրագրի նպատակներն են՝

1) Հողերի կառավարման արդյունավետության շարունակական բարձրացումը.

2) Հողերի կառավարման միասնական համակարգի ձևավորումը, հանրային օգտակարության բարձրացումը.

3) Հողերի օտարումից, ինչպես նաև վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրելուց ստացված միջոցների հաշվին համայնքի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը.

4) համայնքային գույքային շրջանառության բնագավառում միասնական քաղաքականության իրականացումը.

5) Հողերի ամբողջական հաշվառումը, հաշվառման տվյալների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

6) համայնքային հողային հարաբերությունների կարգավորումը և շարունակական բարեփոխումը.

7) հանրությանը Հողերի կառավարման գործընթացին մասնակից դարձնելը.

8) Հողերի արդյունավետ օգտագործման ճանապարհով համայնքային տնտեսությունում ներդրումների ներգրավման բարենպաստ պայմանների ապահովումը:

**7.** Սույն Ծրագրի իրականացման հիմքում դրված են Հողերի կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) Հողերի կառավարման յուրաքանչյուր հողակտորի ծրագրային կառավարման նպատակի սահմանում և ամրագրում.

2) Հողերի կառավարման արդյունավետության շարունակական ապահովում.

3) Հողերի կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովում.

4) համայնք-մասնավոր համագործակցության պարզեցված պայմանների ներդրում.

5) Հողերի կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

**8.** Հողերի կառավարման ընդհանուր գերակայություններն են՝

1) Հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը.

2) Հողերի բերրիության, ֆիզիկական, որակական և նորմատիվային այլ հատկանիշների պահպանումը.

3) Համայնքի կարիքների բավարարման համար անհրաժեշտ Հողերի գերակայությունը, ընդ որում, եթե միևնույն հողամասը կարող է ունենալ նաև շահույթ ստանալու հնարավորություն, այնուամենայնիվ, այն դասվում է համայնքի կարիքները բավարարող հողամասերի խմբին.

4) համայնքի կարիքները բավարարող հողամասերը հիմնականում ենթակա չեն օտարման.

5) շահույթ ստանալու նպատակ հետապնդող հողամասերի կառավարման համար օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվությունը տրվում է այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են համայնքի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարմանը, համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը:

**9.** Հողերիգույքագրան, հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպման, աճուրդների և մրցույթների հայտարարման, կազմակերպման և իրականացման ընթացակարգերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով (համայնքի ավագանու կողմից սահմանված կարգ լինելու դեպքում՝ այդ կարգով):

**10.** Հողերի օտարման (սեփականության իրավունքով անհատույց տրամադրումը, աճուրդով վաճառքը, ուղղակի վաճառքը և փոխանակությունը) և օգտագործման (վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքի, անհատույց (մշտական) օգտագործման իրավունքի) տրամադրումը կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան:

**11.** Ծրագրի ցանկերում ներառված Հողերի օտարումը, օգտագործման և կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է բացառապես հողերիօգտագործման սխեմաներով, անտառաշինարարական նախագծերով, բնակավայրերի գլխավոր հատակագծերով, մանրամասն հատակագծման նախագծերով, գոտևորման նախագծերով:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ

**12.** Ստորև Աղյուսակ 1-ում ներկայացված է համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների:

Աղյուսակ 1

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| | | Տարածքը ( հեկտար) |
|---|---|---|
| | Համայնքի տարածքը | 24388.7 |
| | այդ թվում՝ | |
| 1. | Հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության | |
| 1) | գյուղատնտեսական նշանակության հողեր | 22035.67 |
| | որից՝ | |
| ա. | վարելահողեր | 1868.39 |
| բ. | բազմամյա տնկարկներ | 369.18 |
| գ. | խոտհարքներ | 340.98 |
| դ. | արոտավայրեր | 6298.07 |
| ե. | այլ հողատեսքեր | 13159.05 |
| 2) | բնակավայրերի հողեր | 1263.19 |
| | որից՝ | |
| ա. | տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր | 817.88 |
| 3) | արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | 215.92 |
| 4) | էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր | 149.75 |
| 5) | հատուկ պահպանվող տարածքների հողեր | 113.56 |
| 6) | հատուկ նշանակության հողեր | 17.2 |
| 7) | անտառային հողեր | 469.88 |
| 8) | ջրային հողեր | 123.53 |
| 9) | պահուստային հողեր | 0 |
| 2. | Հողային ֆոնդն ըստ սեփականության սուբյեկտների | |
| 1) | Քաղաքացիների | 2702.04 |
| 2) | Իրավաբանական անձանց | 113.34 |
| 3) | Համայնքային | 17400.32 |
| 4) | Պետական | 4172.83 |
| 5) | Օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների | 0.17 |

## III. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԸՍՏ՝ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ)ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ

**13.** Ստորև Աղյուսակ 2-ում ներկայացված է 01.07.2024 թվականի դրությամբ համայնքի հողային հաշվեկշռով համայնքի սեփականություն հանդիսացող հողերը ըստ՝ հողատեսքերի, նպատակային և գործառնական նշանակության, վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրվածության:

Հավելված 2

| | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը /հողատեսքը | Ընդամենը համայնքի սեփականություն հանդիսացող հողերը ըստ հողային հաշվեկշռի (հա) | Տրամադրված է վարձակալության (հա) | Տրամադրված է անհատույց օգտագործման (հա) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1.1 | Գյուղատնտեսական | վարելահող | 152.32 | 96.79 | 0 |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ | 56.25 | 22.77 | 0 |
| 1.3 | | խոտհարք | 241.62 | 4.57 | 0 |
| 1.4 | | արոտ | 4266.63 | 265.72 | 0 |
| 1.5 | | այլ հողատեսքեր | 12007.32 | 1387.11 | 0 |
| 2.1 | Բնակավայրերի | բնակելի | 21.39 | 1.32 | 0 |
| 2.2 | | հասարակական | 23.37 | 1.50 | 1.56 |
| 2.3 | | խառը կառուցապատման | 1.41 | 0 | 0 |
| 2.4 | | ընդհանուր օգտագործման | 138.09 | 0 | 0 |
| 2.5 | | այլ հողեր | 260.03 | 0 | 0 |
| 3.1 | Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերական | 60.31 | 0 | 0 |
| 3.2 | | Գյուղատնտեսական արտադրական | 59.84 | 2.99 | 0 |
| 3.3 | | պահեստարանների | 3.7 | 0.6 | 0 |
| 3.4 | | ընդերք օգտագործման | 6.31 | 6.31 | 0 |
| 4.1 | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | էներգետիկայի | 4.48 | 0 | 0 |
| 4.2 | | կապի | 0.21 | 0 | 0 |
| 4.3 | | տրանսպորտի | 51.45 | 0 | 0 |
| 4.4 | | կոմունալ | 2.9 | 0.16 | 0 |
| 5.1 | Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | 0 | 0 | 0 |
| 5.2 | | առողջարարական | 0 | 0 | 0 |
| 5.3 | | հանգստի | 0 | 0 | 0 |
| 5.4 | | պատմական և մշակութային | 23.78 | 0 | 0 |
| 6 | Հատուկ նշանակության | | 0 | 0 | 0 |
| 7.1 | Անտառային | անտառ | 0 | 0 | 0 |
| 7.2 | | թփուտ | 0 | 0 | 0 |
| 7.3 | | վարելահող | 0 | 0 | 0 |
| 7.4 | | խոտհարք | 0 | 0 | 0 |
| 7.5 | | արոտ | 0 | 0 | 0 |
| 7.6 | | այլ հողեր | 0 | 0 | 0 |
| 8.1 | Ջրային | գետեր | 0 | 0 | 0 |
| 8.2 | | ջրամբարներ | 0.02 | 0 | 0 |
| 8.3 | | լճեր | 1.36 | 0 | 0 |
| 8.4 | | ջրանցքներ | 10.81 | 0 | 0.22 |
| 8.5 | | հիդրոտեխնիկական և ջրատնտեսական այլ օբյեկտների | 6.73 | 0 | 0 |
| 9.1 | Պահուստային | աղուտներ | 0 | 0 | 0 |
| 9.2 | | ավազուտներ | 0 | 0 | 0 |
| 9.3 | | ճահիճներ | 0 | 0 | 0 |
| 9.4 | | այլ | 0 | 0 | 0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 17400.32 | 1789.48 | 1.78 |

## IV. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**14.** Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

1) համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա.

2) համայնքային հիմնարկներին, համայնքի մասնակցությամբ առևտրային և համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով և վարձակալությամբ տրամադրված Հողերի վրա.

3) քաղաքացիներին, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններին օգտագործման, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրված և հավատարմագրային կառավարման հանձնված Հողերի վրա.

**15.** Սույն ծրագրի գործողությունը չի տարածվում՝ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա, այդ հողամասերի հողային հարաբերությունների կարգավորումները համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը իրականացնում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

**16.** Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

1) Հողերի օտարման և օգտագործման տրամադրման յուրաքանչյուր հողամասի ծրագրային կառավարման իրականացումը.

2) Հողերի օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

3) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող Հողերը տնտեսական շրջանառության մեջ դնելու աշխատանքների իրականացումը.

4) Հողերի հաշվառման բնագավառում արդիական միջոցների ներդրումը և հանրությանը հաշվառման տվյալները հասանելի դարձնելը.

5) Հողերի օգտագործման վիճակի վերաբերյալ ֆինանսատնտեսական մոնիթորինգի իրականացումը և Հողերի օգտագործման նկատմամբ գործուն վերահսկողական համակարգի ներդրումը.

6) Հողերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների գործունեության արդյունքներից ելնելով նրանց պատասխանատվության և կատարված աշխատանքի խրախուսման բնագավառում նոր գործիքակազմի ներդրումը.

7) ներդրումային ծրագրեր իրականացնող, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակ հետապնդող և նոր աշխատատեղեր ստեղծող ձեռնարկություններին և կազմակերպություններին Հողերի օտարման և օգտագործման տրամադրման նպաստավոր պայմանների ապահովումը:

## V. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

**17.** Հողերը օտարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝

ա) սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով.

բ) ուղղակի վաճառքի միջոցով.
գ) աճուրդով.
դ) փոխանակության միջոցով:

**18.** Հողամասերը (բացառությամբ՝ արոտավայրերի) կարող են օտարվել (այդ թվում՝ անհատույց) միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

**19.** Համայնքի սեփականությունը հանդիսացող արոտավայրերը հանդիսանալով ընդհանուր օգտագործման արոտավայրեր և ներառված լինելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների մեջ, օտարման ենթակա չեն, դրանք միայն կարող են տրվել օգտագործման իրավունքով:

**20.** Հողամասի օտարման մասին որոշումը ներառում է տեղեկություններ՝
1) հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մակերեսի, նպատակային նշանակության, հողատեսքի, գործառնական նշանակության, օտարման եղանակի, ժամկետների, նպատակ, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գնի, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին.
2) հողամասն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը կամ անվանումը, օտարվող հողամասի վաճառքի գնի և վճարման ժամկետների մասին:

**21.** Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսից:

**22.** Հողամասն աճուրդով (մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում ավագանու նոր որոշումը ներառում է տեղեկություններ՝ հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման նպատակահարմարության և յուրաքանչյուր հերթական աճուրդում (մրցույթում) հողամասը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի իջեցման չափի մասին, որը պետք է լինի վերջին կազմակերպված աճուրդի (մրցույթի) մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի 10 տոկոսի չափով:

**23.** Հողամասերը օտարվում են համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման հնգամյա ծրագրին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված դեպքերում: Հողերի օտարումը պետք է լինի հիմնավորված, ապահովի որոշակի խնդրի արդյունավետ լուծում:

**24.** Հողերի օտարման պայմանագրերում պետք է ամրագրվեն համայնքի կողմից հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող ծրագրերի ժամկետները:

## VI. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

**25.** Հողամասերն օգտագործման են տրամադրվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝
ա) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով.
բ) վարձակալության:

**26.** Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերից:

**27.** Հողերը կարող են օգտագործվել՝ վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով (այդ թվում՝ անհատույց) հանձնվել միայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ:

**28.** Հողամասի օգտագործման (վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքը) տրամադրելու մասին ավագանու որոշումը ներառում է տեղեկություններ՝ հողամասի գտնվելու վայրի, ծածկագրի, մակերեսի, նպատակային նշանակության, հողատեսքի, գործառնական նշանակության, օգտագործման տրամադրման եղանակի, օգտագործման ժամկետի, նպատակի, վճարի չափի, հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի մասին:

**29.** Հողամասերը մրցույթներով վարձակալության տրամադրելու համար վարձավճարի մեկնարկային տարեկան վարձավճարի չափը չի կարող պակաս լինել անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափից:

**30.** Հողամասի վարձակալության մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը կարող է հայտարարվել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, որոնց կրկնամրցույթն անց է կացվում 7 աշխատանքային օրվա ընթացքում: Կրկնակի մրցույթի չկայանալու դեպքում հողամասը կարող է տրամադրվել առանց մրցույթի:

**31.** Համայնքի սեփականությունը հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները համայնքի ղեկավարի կողմից կարող են պարզեցված կարգով վարձակալության հանձնվել և առանց նոտարական վավերացման համապատասխան պայմանագրերը կնքվել մինչև 3 տարի ժամկետով՝ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով:

## VII. ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**32.** Հողերի կառավարման համակարգի կատարելագործման և Հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) օտարել՝

սույն հավելվածի N 1 ցանկով առաջարկվող՝

այն հողամասերը, որոնց աճուրդով և ուղղակի վաճառքի միջոցով օտարումը առավել կնպաստեն համայնքի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարմանը, համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը.

2) օգտագործման տրամադրել՝

անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով և (կամ) սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով (այդ թվում՝ անհատույց)՝ իրենց գործառույթները և լիազորությունները լիարժեք, արդյունավետ գործունեություն իրականացնելու և համայնքի զարգացմանը նպաստելու նպատակներով՝ սույն հավելվածի N 2 ցանկում նշված հողամասերը՝ ցանկում նշված պետական հիմնարկներին և կազմակերպություններին, համայնքային հիմնարկներին, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, բարեգործական, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամներին.

3) 2025թվականի ընթացքում ապահովել ընդհանուր բնույթի հետևյալ միջոցառումների կատարումը՝

ա.վերանայել մինչև սույն Ծրագրի կազմումը նախկինում վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասերի տրամադրման ժամկետները, վարձավճարների չափերը և դրանք համապատասխանեցնել գործող օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

բ. համապատասխան իրավական ակտերի միջոցով հողամասերի գործառնական և նպատակային նշանակությունները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին:

գ. իրականացնել մինչև սույն Ծրագրի կազմումը նախկինում վարձակալության պայմանագրերով տրամադրված հողամասերի հողօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման մոնիթորինգ, հողօգտագործողների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման պատճառների և գործոնների վերլուծություն:

դ. վերահսկողություն իրականացնել Հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ և վերահսկողության արդյունքում հայտնաբերված իրավախախտումների մասով կիրառել պատասխանատվության միջոցներ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

ե. սահմանել Հողերի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց աշխատանքի պատասխանատվություն սահմանող և խրախուսման ենթարկող այնպիսի ձևեր ու մեխանիզմներ, որոնք կախված կլինեն նրանց գործունեության վերջնական արդյունքներից:

զ. Հողերի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց որակավորման բարձրացման նպատակով ապահովել նրանց մասնակցությունը մասնագիտական վերապատրաստումներին:

## VIII. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

**33**. Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը ապահովում է համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների, ինչպես նաև աշխատակազմի իրավաբանական գործառույթներ իրականացնող աշխատակցի միջոցով:

**34.** Ծրագրով սահմանված նպատակների իրագործման, միջոցառումների իրականացման և Ծրագրի կատարման մասին համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների, ինչպես նաև աշխատակազմի իրավաբանական գործառույթներ

իրականացնող աշխատակցի կողմից մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը մշակվում է տարեկան հաշվետվություն, որը ներկայացվում է համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը հաշվետվությունը քննարկում է համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի, համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման հարցերի խորհրդակցական մարմինների հետ: Համայնքի ղեկավարը հաշվետվությունը և հաշվետվության վերաբերյալ ստացված բոլոր առաջարկությունները՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը:

## IX. ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

**35.** Ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ ավագանու մշտական հանձնաժողովների կողմից: Համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կամ անդամների կողմից առաջարկված այն փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ, որոնք ավելացնում են ծրագրի իրականացման ծախսերը, համայնքի ղեկավարը կազմում և ավագանուն է ներկայացնում իր եզրակացությունը:

Համայնքի ղեկավարը ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ ստացված բոլոր առաջարկությունները օրենքով սահմանված կարգով ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը:

## X. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

**36.**Ծրագրով նախատեսված միջոցառումների և համայնքային նշանակության հողաշինարարությունը (հողամասերի չափագրումը, համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցումը և վկայականների ձեռքբերումը, աճուրդների և մրցույթների կազմակերպումը, գյուղատնտեսական հողերի պահպանման ծրագրերի մշակումը, հողամասերը տեղանքում ամրացնելը, հողամասերի հատակագծերի, հողամասի տրամադրման վերաբերյալ փաստաթղթերի նախապատրաստումը, համայնքային հողաշինարարական և հողի օգտագործման ու պահպանության այլ նախագծերի մշակումը, խախտված հողերի վերականգնումը, հողաշերտերը ջրային ու հողմային հողատարումից, անապատացումից, ցեխաջրերից, փլուզումներից, ջրածածկումից, ճահճացումից, չորացումից, պնդացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոնների, ռադիոակտիվ և քիմիական նյութերի ախտահարումից պաշտպանելու, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու, հողը պահպանելու և դրա բերրիությունը բարձրացնելու ծրագրերի, աշխատանքային նախագծերի մշակումը, հատուկ պահպանվող տարածքների տեղաբաշխման և դրանց սահմանագծման հիմնավորումը, համայնքում սեփականատերերի և հողօգտագործողների հողամասերի սահմանների նկարագրումը, ամրացումը և փոփոխությունը, հողաշինության գծով տեղագրական, գեոդեզիական, քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական, պատմական և մշակութային ու այլ հետազոտական աշխատանքների իրականացումը, համայնքի հողային ֆոնդի հաշվառումը, գույքագրումը և չօգտագործվող, ինչպես նաև ոչ արդյունավետ օգտագործվող կամ իր նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի բացահայտումը, հողային պաշարների վիճակի և օգտագործման կադաստրային ու թեմատիկ քարտեզների և ատլասների կազմումը, հողերի մոնիթորինգը, նոր հողամասերի կազմավորման, հողամասերի միավորման ու բաժանման, գոյություն ունեցող հողամասերի

կարգավորման միջոցառումների իրականացումը) իրականացվում է համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

**37.** Ծրագրով նախատեսված Հողերի օտարումից, ինչպես նաև՝ վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով տրամադրումից, աճուրդների և մրցույթների կազմակերպումից ստացված միջոցները մուտքագրվում են համայնքի բյուջե:

**ՑԱՆԿ N 1**

**2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԵՐԻ**

| ՀՀ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը/հողատեսքը | Մակերեսը /հա/ |
|---|---|---|---|
| 1 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | 0.8 |
| 2 | Բնակավայրերի | Հասարակական կառուցապատման | 0.3 |
| 3 | Գյուղատնտեսական | Վարելահող | 25 |
| 4 | Գյուղատնտեսական | Խոտհարք | 25 |
| 5 | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 1030 |

**ՑԱՆԿ N 2**

**2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԵՐԻ**

| ՀՀ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը/հողատեսքը | Մակերեսը /հա/ | Օգտագործման եղանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | Վարելահող | 1.2 | Վարձակալություն |
| 2 | Գյուղատնտեսական | Արոտավայր | 200 | Սերվիտուտ |
| 3 | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 1100 | Սերվիտուտ |
| 4 | Գյուղատնտեսական | Խոտհարք | 75 | Սերվիտուտ |
| 5 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | 0.3 | Վարձակալություն |
| 6 | Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական | Գյուղատնտեսական արտադրական | 0.5 | Վարձակալություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 86-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ) ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և համաձայն 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջների.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր

Հավելված
Վայոց ձորի մարզի
Եղեգնաձոր համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի 20-ի թիվ 86-Ա որոշման

# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ) ԾՐԱԳԻՐ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի (այսուհետ՝ Համայնք) սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների կառավարման 2025 թվական (ամենամյա) ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների (այսուհետ՝ Շենք-շինություններ) օգտագործման արդյունավետության բարձրացմանը, համայնքի անշարժ գույքի ֆոնդի կառավարման՝ տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում համայնքային միասնական քաղաքականության սահմանմանը, Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված խնդիրների լուծմանը և հանդիսանում է Համայնքի ՀՀԶԾ-ի բաղկացուցիչ մասը:

2. Ծրագրի իրականացման հիմքում դրվել են Համայնքի Շենք-շինությունների նպատակային և ծրագրային կառավարման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ Շենք-շինությունների հաշվառման, չափագրման, Համայնքի իրավունքների պետական գրանցման, գնահատման աշխատանքների կազմակերպման, Շենք-շինությունների պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրների լուծումը:

3. Ծրագրի ընդունման իրավական հիմք է հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը:

4. Շենք-շինությունները տնօրինում է Համայնքի ավագանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Համայնքի ղեկավարի միջոցով:

5. Շենք-շինությունների կառավարման հետ կապված հարաբերությունների կարգավորումը ներառում է՝

1) Շենք-շինությունների կառավարման հիմնախնդիրների լուծումը.
2) Շենք-շինությունների հաշվառման բնագավառում միասնական սկզբունքների սահմանումը և անշարժ գույքի հաշվառման բազայում Շենք-շինությունների ամբողջական ընդգրկումը, ինչպես նաև հաշվառման տվյալների ճշգրտության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ընտրանքային ուսումնասիրությունների անցկացումը.
3) Շենք-շինությունների մշտադիտարկումը (մոնիթորինգ), օգտագործումը և պահպանումը, Շենք-շինությունների շրջանառության նպատակի իրականացումը.
4) Շենք-շինությունների կառավարման բնագավառում համայնքային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ուղղությունների սահմանումը.
5) Շենք-շինությունների օտարման և օգտագործման ոլորտում համայնքային քաղաքականության մշակումը և իրականացումը.
6) Շենք-շինությունների նկատմամբ գույքային իրավունքների գրանցման ոլորտում միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը:

6. Սույն Ծրագրի իրականացման հիմքում դրված են Շենք-շինությունների կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) յուրաքանչյուր Շենք-շինության ծրագրային կառավարման նպատակի սահմանում և ամրագրում.
2) Շենք-շինությունների կառավարման արդյունավետության շարունակական ապահովում.
3) Շենք-շինությունների կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովում.
4) Շենք-շինությունների կառավարման ոլորտում համայնք-մասնավոր հատված համագործակցության պարզեցված պայմանների ներդրում.
5) Շենք-շինությունների կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովում:

7. Շենք-շինությունների կառավարման ընդհանուր գերակայություններն են՝

1) Շենք-շինությունների օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը.
2) Շենք-շինությունների ֆիզիկական, որակական և նորմատիվային այլ հատկանիշների պահպանումը.
3) Համայնքի կարիքների բավարարման համար անհրաժեշտ Շենք-շինությունների գերակայությունը, ընդ որում, եթե միևնույն Շենք-շինությունը կարող է ունենալ նաև շահույթ ստանալու հնարավորություն, այնուամենայնիվ, այն դասվում է Համայնքի կարիքները բավարարող Շենք-շինությունների խմբին.
4) Համայնքի կարիքները բավարարող Շենք-շինությունները ենթակա չեն օտարման.
5) շահույթ ստանալու նպատակ հետապնդող Շենք-շինությունների կառավարման համար օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվությունը տրվում է այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են Համայնքի տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարմանը, Համայնքի բյուջեի եկամուտների ավելացմանը:

8. Շենք-շինությունների գույքագրման, հաշվառման, Համայնքի իրավունքների պետական գրանցման, գնահատման աշխատանքների կազմակերպման, Շենք-շինությունների տնօրինման նպատակով աճուրդների և մրցույթների հայտարարման, կազմակերպման և իրականացման, ուղղակի վաճառքի միջոցով օտարման ընթացակարգերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համայնքի ավագանու կողմից հաստատված գույքի կառավարման կարգով և սույն Ծրագրով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

## II. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

1) Համայնքի պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ Համայնքի սեփականություն հանդիսացող Շենք-շինությունների վրա.
2) համայնքային հիմնարկներին, Համայնքի մասնակցությամբ առևտրային և համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով և/կամ վարձակալությամբ տրամադրված Շենք-շինությունների վրա.

3) քաղաքացիներին, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններին օգտագործման և/կամ վարձակալության իրավունքով տրամադրված համայնքային Շենք-շինությունների վրա.

10. Ծրագրի նպատակներն են՝

1) Շենք-շինությունների կառավարման արդյունավետության շարունակական բարձրացումը.
2) Շենք-շինությունների կառավարման միասնական համակարգի ձևավորումը, հանրային օգտակարության բարձրացումը.
3) Շենք-շինությունների օտարումից, ինչպես նաև օգտագործման և վարձակալության իրավունքով տրամադրելուց ստացված միջոցների հաշվին Համայնքի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը.
4) Համայնքի անշարժ գույքի շրջանառության բնագավառում միասնական քաղաքականության իրականացումը.
5) Շենք-շինությունների ամբողջական հաշվառումը, հաշվառման տվյալների թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.
6) Շենք-շինությունների կառավարման հետ կապված հարաբերությունների կարգավորումը և շարունակական բարեփոխումը.
7) հանրությանը Շենք-շինությունների կառավարման գործընթացին մասնակից դարձնելը.
8) Շենք-շինությունների արդյունավետ օգտագործման ճանապարհով համայնքային տնտեսությունում ներդրումների ներգրավման բարենպաստ պայմանների ապահովումը:

11. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

1) Շենք-շինությունների օտարման և օգտագործման տրամադրման դեպքում յուրաքանչյուր Շենք-շինության ծրագրային կառավարման իրականացումը.
2) Շենք-շինությունների օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության տրամադրման գործընթացում արդիական գործիքակազմի կիրառումը, անհատույց օգտագործման տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, հավասար պայմանների սահմանումը, վարչարարության կրճատումը, գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.
3) չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող Շենք-շինությունները տնտեսական շրջանառության մեջ դնելու ծրագրերի մշակումն ու իրականացումը.
4) Շենք-շինությունների հաշվառման բնագավառում արդիական էլեկտրոնային, թվային միջոցների ներդրումը և հանրությանը հաշվառման տվյալները հասանելի դարձնելը.
5) Շենք-շինությունների օգտագործման վիճակի վերաբերյալ ֆինանսատնտեսական մոնիթորինգի իրականացումը և Շենք-շինությունների օգտագործման նկատմամբ գործուն վերահսկողական համակարգի ներդրումը.
6) Շենք-շինությունների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների գործունեության արդյունքներից ելնելով, նրանց պատասխանատվության և կատարված աշխատանքի խրախուսման բնագավառում նոր գործիքակազմի ներդրումը.
7) ներդրումային ծրագրեր իրականացնող, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակ հետապնդող և նոր աշխատատեղեր ստեղծող ձեռնարկություններին և կազմակերպություններին Շենք-շինությունների օտարման և օգտագործման տրամադրման նպաստավոր պայմանների ապահովումը:

## III. ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

12. Համայնքի պարտադիր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ Շենք-շինությունների ընթացիկ պահպանումն ու բարելավումը հանդիսանում է համայնքային գույքի կառավարման քաղաքականության կարևոր բաղադրիչը:

13. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետը՝ մինչև Համայնքի հաջորդ տարվա գույքի կառավարման ծրագրի նախագծի քննարկումը, Համայնքի ղեկավարին է ներկայացնում համայնքապետարանի վարչական շենքի, ինչպես նաև՝ համայնքային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների վարչական շենքերի և այլ համայնքային Շենք-շինությունների ընթացիկ պահպանման, բարելավման՝ վերանորոգման, վերակառուցման, հիմնանորոգման, արդիականացման վերաբերյալ կազմված զեկույցը:

14. Զեկույցը կազմելիս հաշվի են առնվում այդ Շենք-շինությունները տիրապետող պաշտոնատար անձանցից ստացված առաջարկությունները:

15. Համայնքի ղեկավարը զեկույցը քննարկում է համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության, և, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինների մասնագետների, Համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուների և բնակավայրերի վարչական ղեկավարների հետ:

16. Քննարկման արդյունքում հստակեցվում է հաջորդ տարվա ընթացքում Շենք-շինությունների ընթացիկ պահպանման և բարելավման միջոցառումների աշխատանքային ծրագիրը:

17. Համայնքի ղեկավարը հանձնարարում է համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի մասնագետներին՝ կազմել աշխատանքային ծրագրով նախատեսված Շենք-շինությունների պահպանման և բարելավման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու աշխատանքների տեխնիկական պայմանները և ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին և գնումների համակարգման ոլորտի պատասխանատուին՝ «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով այդ աշխատանքները ձեռք բերելու համար:

18. Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ լինելուց հետո համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետը ոլորտի պատասխանատուն հաշվարկում է Համայնքի բյուջեից կատարվելիք ծախսերը և հաշվարկները ներկայացնում է քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետին: Վերջինս Շենք-շինությունների ընթացիկ պահպանման, վերանորոգման և բարելավման միջոցառումների հստակեցված աշխատանքային ծրագիրը ներկայացնում է Համայնքի ղեկավարին:

19. Համայնքի ղեկավարի կողմից հաստատվելուց հետո համայնքային գույքի կառավարման ոլորտի պատասխանատուն աշխատանքային ծրագիրը ներառում է հաջորդ տարվա Համայնքի գույքի կառավարման ծրագրի նախագծում՝ Համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը ներկայացնելու նպատակով:

20. Համայնքի հաջորդ տարվա բյուջեի նախագծում ներառվում են Համայնքի գույքի կառավարման ծրագրում նախատեսված ծախսերը:

21. Համայնքի գույքի կառավարման ծրագրի գործողության տարվա ընթացքում իրականացվում են ծրագրով նախատեսված Շենք-շինությունների վերանորոգման, վերակառուցման և բարելավման աշխատանքների տեխնիկական պայմանների կազմման, «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով այդ աշխատանքների ձեռքբերման և համակարգված կազմակերպման գործընթացները:

22. Մինչև մեկ միլիոն դրամ արժողությամբ ընթացիկ պահպանման աշխատանքները կարող են իրականացվել Համայնքի տնտեսությունը սպասարկող հիմնարկների, կազմակերպությունների կամ նման գործառույթներով օժտված աշխատակիցների միջոցով: Համայնքում այդպիսի հնարավորությունների բացակայության դեպքում՝ համայնքապետարանի աշխատակազմը այդ աշխատանքները կարող է ձեռք բերել քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա:

## IV. ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ

23. Շենք-շինություններն օտարվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, համայնքի ավագանու կողմից հաստատված գույքի կառավարման կարգով և Շենք-շինությունների կառավարման ամենամյա ծրագրով նախատեսված ընթացակարգերին համապատասխան՝ սահմանված դեպքերում ու ժամկետներում:

24. Շենք-շինություններն օտարվում են՝

1) աճուրդով.
2) մրցույթով.
3) ուղղակի վաճառքի միջոցով.
4) նվիրատվության կամ նվիրաբերության ձևով:

24. Շենք-շինություններն օտարվում են Համայնքի Շենք-շինությունների կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերով նախատեսված նպատակներով, Համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման նպատակներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ դեպքերում:

25. Շենք-շինությունների օտարումը պետք է լինի հիմնավորված, ապահովի որոշակի խնդրի արդյունավետ լուծում:

26. Շենք-շինությունները օտարվում կամ օգտագործման են տրամադրվում (այդ թվում՝ անհատույց) Համայնքի ավագանու որոշմամբ՝ Համայնքի ղեկավարի միջոցով:

27. Շենք-շինությունների օտարման մասին որոշումը ներառում է տեղեկություններ՝ Շենք-շինության հասցեի, կադաստրային ծածկագրի, սեփականության իրավունքի վկայականի համարի և տրման տարեթվի, մակերեսի, նպատակային նշանակության, գործառնական նշանակության, օտարման եղանակի, ժամկետների, նպատակի, գույքի գնահատման հաշվետվության համարի և ամսաթվի, հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գնի, ուղղակի վաճառքի դեպքում նաև՝ վաճառքի գնի, վճարման ժամկետների, գնորդի անվան կամ անվանման, ուղղակի վաճառքի եղանակի ընտրության հիմնավորման մասին:

28. Շենք-շինությունները հրապարակային սակարկություններով օտարման ներկայացնելիս՝

1) ընտրվում է մրցույթով վաճառքի եղանակը, եթե գնորդը Շենք-շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելու հետ մեկտեղ գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով գործարար ծրագրին համապատասխան պետք է ստանձնի որոշակի պարտավորություններ.
2) ընտրվում է աճուրդով վաճառքի եղանակը, եթե գնորդից չի պահանջվում կատարել որևէ պարտավորություն:

29. Շենք-շինությունների օտարման ժամանակ ուղղակի վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների ժամանակ՝ մեկնարկային գինը, որոշվում է համապատասխան որակավորում ունեցող անկախ գնահատողի կողմից տրված գնահատման հաշվետվության հիման վրա՝ Համայնքի ավագանու որոշմամբ:

30. Շենք-շինությունների ուղղակի վաճառքով օտարման ներկայացվելու դեպքում վաճառքի գինը սահմանվում է գնահատված արժեքի 100 տոկոսի չափով: Շենք-շինություններն ուղղակի վաճառքով չօտարվելու դեպքում՝ դրանք ենթակա են օտարման աճուրդով կամ մրցույթով:

31. Շենք-շինություններն աճուրդով կամ մրցույթով օտարման ներկայացվելու դեպքում առաջին աճուրդով վաճառքի մեկնարկային կամ առաջին մրցույթով վաճառքի նվազագույն գինը սահմանվում է գնահատված արժեքի 100 տոկոսի չափով:

32. Շենք-շինություններն աճուրդով (մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում, հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման նպատակահարմարության, ինչպես նաև՝ յուրաքանչյուր հերթական աճուրդում (մրցույթում) Շենք-շինությունը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ մեկնարկային գնի իջեցման չափի մասին որոշումը կայացնում է Համայնքի ավագանին: Մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ կարող է նվազեցվել նախորդ (վերջին) աճուրդի (մրցույթի) մեկնարկային գնի 10 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան Շշենք-շինության գնահատված արժեքի 50 տոկոսի չափով:

33. Նպատակային մրցույթների միջոցով Շենք-շինությունների օտարման պայմանագրերում պետք է ամրագրվեն տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվելիք ծրագրերը ու իրականացման ժամկետները, ներդրման չափն ու պայմանները, դրանց չիրականացման դեպքում Համայնքի կողմից Շենք-շինությունների առաջնային հետգնման իրավունքը, ինչպես նաև՝ օտարման պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը:

34. Շենք-շինություններն օտարվում են ուղղակի եղանակով՝

1) օրենքով գնման նախապատվություն ունեցող անձանց.
2) տվյալ Շենք-շինության օգտագործողին, եթե օգտագործման համար առկա են օրինական հիմքեր (օրդերներ, իրավասու մարմինների որոշումներ, արձանագրություններ, պայմանագրեր և այլն).
3) այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք փաստացի տիրապետում և օգտագործում են իրենց բնակարաններին կամ տարածքներին անմիջապես կից ոչ բնակելի տարածքները, որոնց մուտքերը բացառապես բնակարաններից կամ տարածքներից են և դրանք այլ մուտք չունեն.
4) սոցիալական կամ բարեգործական կամ Համայնքի ավագանու հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով՝ ուղղակի վաճառքի պայմանագրում սահմանելով իրականացվելիք ծրագրերը ու իրականացման ժամկետները, ներդրման չափն ու պայմանները, դրանց չիրականացման դեպքում Համայնքի կողմից Շենք-շինությունների առաջնային հետգնման իրավունքը, ինչպես նաև՝ ուղղակի վաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը.
5) օրենքով չարգելված այլ դեպքերում:

35. Շենք-շինություններն օտարվում են նվիրաբերության կարգով հանրօգուտ նպատակներով՝

1) բուժական, դաստիարակչական հիմնարկներին, սոցիալական պաշտպանության հաստատություններին, բարեգործական, գիտական, ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, թանգարաններին ու մշակույթի այլ հաստատություններին, հասարակական և կրոնական կազմակերպություններին՝ իրենց գործունեությանը համապատասխան նշանակությամբ օգտագործելու պայմանով.

2) քաղաքացիներին և պետությանը՝ որոշակի նպատակով օգտագործելու համար:

36. Նվիրաբերության մասին Համայնքի ավագանու որոշման մեջ սահմանվում է դրույթ նվիրաբերություն ստացողի կողմից Շենք-շինությունը նվիրաբերողի սահմանած

նշանակությանն անհամապատասխան օգտագործելու դեպքում նվիրաբերությունը վերացնելու պահանջ ներկայացնելու Համայնքի իրավունքի մասին:

37. Շենք-շինություններն օտարվում են նվիրատվության կարգով ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետությանը՝ սոցիալական և բարեգործական խնդիրների լուծման նպատակով՝ համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի կամ համապատասխան ոլորտի պատասխանատու մասնագետի հատուկ եզրակացության հիման վրա.

38. Շենք-շինությունների օտարման նպատակով աճուրդը (մրցույթը) կազմակերպում ու անցկացնում է Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

39. Աճուրդով (մրցույթով) օտարման դեպքում Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվում է աճուրդի (մրցույթի) հայտարարությունը, որտեղ նշվում են աճուրդի (մրցույթի) ձևը, լոտերի քանակը և նկարագրությունը, մեկնարկային գինը, աճուրդի (մրցույթի) իրականացման ժամկետները, պայմանները և այլ տվյալներ:

40. Մրցույթի կարգով օտարման դեպքում հաղթողին որոշելու նպատակով կարող են առաջադրվել հետևյալ պայմանները՝

1) գինը.
2) ներդրումների տեսակը.
3) ներդրումների չափը.
4) ներդրումային ծրագրերի իրականացման ժամկետները.
5) այլ պայմաններ:

41. Աճուրդի (մրցույթի) մասին հրապարակային ծանուցումը կատարվում է մամուլով, զանգվածային լրատվության այլ միջոցներով, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայք էջով, Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանի պաշտոնական կայք էջերով՝ աճուրդի (մրցույթի) անցկացումից առնվազն մեկ ամիս առաջ:

42. Աճուրդին (մրցույթին) մասնակցելու համար մասնակցի կողմից վճարվում է՝

1) նախավճար՝ լոտի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, որը հաղթող մասնակցի համար համարվում է լոտի վաճառքի գնի մաս և չի վերադարձվում, եթե հաղթող մասնակիցը հրաժարվում է հետագա վճարումները կատարելուց, իսկ չհաղթող մասնակցին վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո՝ 7-օրյա ժամկետում.
2) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության տեղական վճար՝ Համայնքի ավագանու սահմանած չափով.
3) անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ Համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Համայնքի ավագանու սահմանած չափով:

43. Աճուրդի (մրցույթի) մասնակցության համար միայն մեկ հայտ ներկայացնելը հիմք չի հանդիսանում աճուրդը (մրցույթը) չկայացած համարելու համար:

44. Աճուրդում (մրցույթում) հաղթող ճանաչված անձի կողմից լրիվ վճարումները կատարելուց հետո, բայց ոչ ուշ աճուրդի (մրցույթի) արդյունքներն ամփոփելուց հետո 10-րդ օրը, աճուրդի կազմակերպիչը հաղթողին է տրամադրում աճուրդի արձանագրության մեկ օրինակը, լոտի օտարման մասին Համայնքի ղեկավարի որոշումը և օտարման գործարքի համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

45. Շենք-շինությունների օտարումից ստացված ֆինանսական միջոցներն ուղղվում են Համայնքի բյուջե:

## V. ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

46. Շենք-շինություններն օգտագործման են տրամադրվում՝

1) անհատույց (մշտական կամ ժամանակավոր) օգտագործման իրավունքով.
2) վարձակալության իրավունքով
3) կարճաժամկետ օգտագործման նպատակով:

47. Շենք-շինություններն օգտագործման կամ վարձակալության կարող են տրամադրվել՝

1) ուղղակի եղանակով.
2) մրցույթով:

48. Շենք-շինությունները վարձակալության կամ օգտագործման են տրամադրվում ավագանու որոշմամբ՝ Համայնքի ղեկավարի միջոցով:

49. Շենք-շինությունները վարձակալության կամ օգտագործման տրամադրելու մասին ավագանու որոշումը ներառում է տեղեկություններ՝ Շենք-շինությունների հասցեի, կադաստրային ծածկագրի, սեփականության իրավունքի վկայականի համարի և տրման տարեթվի, մակերեսի, նպատակային նշանակության, գործառնական նշանակության, օգտագործման տրամադրման եղանակի, օգտագործման ժամկետի, նպատակի, վճարի կամ վարձավճարի չափի, հրապարակային սակարկությունների դեպքում՝ վարձավճարի նվազագույն չափի, պայմանների մասին:

50. Շենք-շինությունների ուղղակի եղանակով օգտագործման տրամադրման ժամանակ վարձավճարի կամ վճարի չափը, իսկ հրապարակային սակարկությունների ժամանակ՝ վարձավճարի կամ վճարի նվազագույն չափը, որոշվում է համապատասխան որակավորում ունեցող անկախ գնահատողի կողմից տրված գնահատման հաշվետվության հիման վրա՝ ավագանու որոշմամբ:

51. Շենք-շինությունները վարձակալության է տրամադրվում ուղղակի ձևով՝

1) եթե առկա է օրենքով վարձակալության նախապատվության իրավունքը.
2) եթե՝ Համայնքի ինչպես սեփականության իրավունքի պետական գրանցում ունեցող, այնպես էլ սեփականության իրավունքի գրանցում չունեցող Շենք-շինության վարձակալները (որոնց հետ ստորագրված վարձակալության պայմանագրերը նոտարական վավերացում չեն ստացել, կամ այդ պայմանագրերը նոտարական վավերացում ստացել են, սակայն սահմանված ժամկետներում անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցում չեն ստացել) ամբողջությամբ վճարել են կամ համայնքապետարանի աշխատակազմի կողմից հաշվարկված վճարները վճարելու և վարձակալական պայմանագիր կնքելու մասին գրավոր առաջարկություն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կվճարեն հաշվարկված վճարները,
3) եթե տվյալ Շենք-շինության վարձակալը պայմանագրի գործողության ամբողջ ժամկետում կատարել է պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորություններն առանց խախտումների,
4) եթե սահմանված կարգով մրցույթի հայտարարության հրապարակումից հետո առաջին հայտը ներկայացվելու օրվանից 10-օրյա ժամկետում այլ հայտեր չեն ներկայացվել և դիմողը միանվագ վճարում է առնվազն 6 ամսվա համար հաշվարկված վարձավճարը:

52. Շենք-շինություններն անհատույց օգտագործման իրավունքով կարող են տրամադրվել սոցիալական, բարեգործական, Համայնքի տնտեսական ակտիվության խթանման և Համայնքի զարգացման ծրագրերով նախատեսված այլ նպատակներով՝

1) պետությանը.
2) հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին և ոչ առևտրային կազմակերպություններին.
3) միջազգային կազմակերպություններին.
4) քաղաքացիներին:

53. Քաղաքացիներին, իրավաբանական անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ չարգելված և Համայնքի շահերին չհակասող գործունեություն իրականացնելու համար, կարճաժամկետ

(ժամ, օր, ամիս, տարի) օգտագործման նպատակով կարող են տրամադրվել Համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ տարածքները՝

1) վարչական, կրթական և մշակութային նշանակության Շենք-շինությունների նախասրահները, ֆոյեները, դահլիճները, աշխատասենյակները.
2) հրապարակները, պուրակները.
3) հանգստի գոտիները.
4) սպորտային հրապարակները, մարզադաշտերը.
5) հանդիսությունների, ծիսակատարությունների սրահները.
6) ամֆիթատրոնները.
7) այլ տարածքներ:

54. Տարածքների կարճաժամկետ օգտագործման տրամադրման համար գանձվում է համայքի ավագանու սահմանած ծառայությունների մատուցման վճարը:

55. Տարածքները տրամադրվում են քաղաքացիների կամ իրավաբանական անձանց ներկայացրած հայտի հիման վրա կնքված պայմանագրի համաձայն:

56. Տարածքները տրամադրվում են պայմանագիրը և վճարման անդորրագիրը տարածքի տիրապետման համար պատասխանատու պաշտոնատար անձին ներկայացնելուց հետո:

## VI. ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

57. Սույն Ծրագրին համապատասխան 2025 թվականների ընթացքում իրականացվող միջոցառումները, ինչպես նաև Համայնքի Շենք-շինությունների ցանկը ներկայացված են աղյուսակ 1-ում:

## VII. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

58. Սույն Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման կազմակերպումն ու համակարգումը ապահովում է Համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինների, Համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուների և այլ համապատասխան մասնագետների և հանձնաժողովների միջոցով:

59. Ծրագրի իրականացման կատարողականի մասին համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետը, մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը, համայնքի ղեկավարին է ներկայացնում տարեկան հաշվետվություն:

60. Հաշվետվությունը կազմելու համար Ծրագրի տարբեր բաղադրիչների կատարողականի վերաբերյալ տեղեկություններ, թվային, քանակական, որակական ցուցանիշներ և այլ տվյալներ ստանալու անհրաժեշտության դեպքում համայնքապետարանի աշխատակազմի գույքի կառավարման ոլորտի պատասխանատուն դրանք ստանում է Ծրագրի համապատասխան բաղադրիչների իրականացման պատասխանատուներից և աշխատակազմի այլ մասնագետներից:

61. Համայնքի ղեկավարը հաշվետվությունն ընդգրկում է Համայնքի ՀՀԶԾ-ի կատարման տարեկան հաշվետվության նախագծում և մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի հետ, ներկայացնում է Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական

մարմինների և ավագանու անդամների (հանձնաժողովների) քննարկմանը, իսկ մինչև մարտի 20-ը՝ հաշվետվությունները ներկայացվում են ավագանու հաստատմանը:

## VIII. ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

62. Ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամների կամ ավագանու մշտական հանձնաժողովների կողմից: Համայնքի ավագանու անդամների կամ մշտական հանձնաժողովների կողմից առաջարկված այն փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ, որոնք ավելացնում են Ծրագրի իրականացման ծախսերը, Համայնքի ղեկավարը հանձնարարում է աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության, և, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինների պետերին՝ կազմել և ներկայացնել այդ ծախսերի վերաբերյալ հիմնավոր հաշվարկներ:

63. Համայնքի ղեկավարը Ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ ստացված բոլոր առաջարկությունները, հաշվարկները՝ իր եզրակացության հետ միասին, ներկայացնում է Համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

## IX. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

64. Ծրագրով նախատեսված միջոցառումները՝ Շենք-շինությունների չափագրման, Համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցման, գնահատման, աճուրդների և մրցույթների կազմակերպման, Շենք-շինությունների պահպանման, Շենք-շինությունները տնօրինելու վերաբերյալ փաստաթղթերի փաթեթների նախապատրաստման, Շենք-շինությունների վերանորոգման, բարելավման, Շենք-շինությունների ֆոնդի հաշվառման, գույքագրման, չօգտագործվող, ինչպես նաև ոչ արդյունավետ օգտագործվող կամ իր նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող Շենք-շինությունների բացահայտման, Շենք-շինությունների մոնիթորինգի, վերահսկողության և այլ գործընթացներն իրականացվում են համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

65. Ծրագրով նախատեսված Շենք-շինությունների օտարումից, վարձակալության իրավունքով հանձնումից, տարածքները օգտագործման տրամադրումից, աճուրդների և մրցույթների կազմակերպումից ստացված միջոցները մուտքագրվում են Համայնքի բյուջե:

Աղյուսակ 1

| ՀՀ | Շենքի կամ շինության անվանումը | Հասցեն կամ ծածկագիրը | Զբաղեցրած տարածքը/ մակերեսը ($մ^2$) | Վիճակի գնահատումը | Գույքի կառավարման գործառույթը | Գործողության/միջոցառման անվանումը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Եղեգնաձորի համայնքապետարանի շենք | Եղեգնաձոր բնակավայր, Շահումյան 1 | 525.15 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | Ընթացիկ վերանորոգում |
| 2 | Մարզադպրոցի շենք | Եղեգնաձոր բնակավայր, Վ. Գևորգյան 2/1 | 900 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | Ընթացիկ վերանորոգում |
| 3 | Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի շենք | Եղեգնաձոր բնակավայր, Շահումյան 8 | 236.1 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | X |
| 4 | Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ | Եղեգնաձոր բնակավայր, Միկոյանի 7 | 710 | Ենթակա չէ շահագործման | Չի օգտագործվում | X |
| 5 | Եղեգնաձորի թիվ 2 մանկապարտեզ | Եղեգնաձոր բնակավայր, Կոմիտասի 13 | 1178.68 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | X |
| 6 | Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ | Եղեգնաձոր բնակավայր, Վ. Զորավար 35 | 661.18 | Վերանորոգված է | Օգտագործվում է | X |
| 7 | Գետափի վարչական շենք | Գետափ բնակավայր, փ 19, 1ա | 660 | Վերանորոգված է | Օգտագործվում է | X |
| 8 | «Արևիկ» մանկապարտեզ | Գետափ բնակավայր, փ 19, փկղ 5, շենք 4 | 1010 | Վերանորոգված է | Օգտագործվում է | X |
| 9 | Վերնաշեն բնակավայրի վարչական շենք | Վերնաշեն բնակավայր, Թանահատ փողոց 56Ա | 260 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | X |
| 10 | Վերնաշեն բնակավայրի Մշակույթի տուն | Վերնաշեն բնակավայր, Թանահատ փողոց 60 | 1720 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | X |
| 11 | Վերնաշեն բնակավայրի մանկապարտեզի շենք | Վերնաշեն բնակավայր, Թանահատ փողոց 29 | 593 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | Ընթացիկ վերանորոգում |
| 12 | Գլաձոր բնակավայրի վարչական կենտրոնի շենք | Գլաձոր բնակավայր, փողոց 33, շենք 41 | 254.3 | Մասնակի ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | X |
| 13 | Գլաձորի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենք | Գլաձոր բնակավայր, փողոց 33, փկղ 2, շենք 2 | 654.82 | Վերանորոգված է | Օգտագործվում է | X |
| 15 | Գլաձորի մշակույթի տան շենք | Գլաձոր բնակավայր, փողոց 11, շենք 9 | 1731.5 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | X |
| 16 | Մալիշկա բնակավայրի վարչական շենք | Մալիշկա բնակավայր, 1-ին փ., 1 շ. | 0.06497 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | Ընթացիկ վերանորոգում |
| 17 | Մալիշկայի մշակույթի տուն | Մալիշկա բնակավայր, 1-ին փ., 2 շ. | 0.71777 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | X |
| 18 | Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզի շենք | Մալիշկա բնակավայր, 8-րդ փ., 76 շ. | 810 | Ենթակա է վերանորոգման | Օգտագործվում է | Ընթացիկ վերանորոգում |
| 19 | Մալիշկայի թիվ 2 մանկապարտեզի շենք | Մալիշկա բնակավայր, Կենտրոնական փ., 3-րդ նրբ., 3 շ. | 1327.95 | Վերանորոգված է | Օգտագործվում է | Ընթացիկ վերանորոգում |
| 20 | Մանկապարտեզի շենքի մաս | Եղեգնաձոր բնակավայր, Արսենյան 11 | 432 | Վերանորոգման փուլում է | Օգտագործվելու է Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզի կողմից | Վերանորոգում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 87-Ա

## «ԼԵԳՐԱՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով 2025 թվականի հունիսի 6-ին Եղեգնաձորի համայնքապետարանում անցկացված հանրային լսման արձանագրությունը և այն հանգամանքը, որ հանրային լսման արդյունքում բնակչությունը նախատեսվող գործունեությանը տվել է դրական կարծիք.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի վարչական տարածքում «Լեգրանդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Եղեգնաձոր քաղաքում նախատեսվող գործունեությանը, համաձայն որի նախատեսվում է Եղեգնաձոր քաղաքի Ագարակաձորի խճուղի 2/1/1 հասցեում բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված հասցեում գտնվող անշարժ գույքը (տարածք) սեփականության իրավունքով պատկանում է «Լեգրանդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -1
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ

ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 88-Լ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՍԱՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող մանկապարտեզ ՀՈԱԿ-ների աշխատակիցներին՝ 2024-2025 թթ. աշխատանքային տարվա հերթական արձակուրդն օգտագործել սկսած 2025 թվականի հուլիսի 21-ից՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված օրերի քանակի:

2. Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների սաներին տրամադրել արձակուրդ՝ սույն թվականի հուլիսի 21-ից սեպտեմբերի 1-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 89-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.22525 հա հասարակական կառուցապատման հողը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 02062025-10-0012, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0119-0197) մրցութային կարգով տրամադրել կառուցապատման՝ 50 (հիսուն) տարի ժամկետով:

2. Սույն որոշման առաջին կետում նշված հողի կառուցապատման համար՝ մրցույթի մեկնարկային գին սահմանել 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ, որը պակաս չէ տվյալ հողի (անշարժ գույք) հարկի տարեկան դրույքաչափից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 90-Ա

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ՉԵԽԱՆՈՎԵՑ ՔԱՂԱՔԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի և Լեհաստանի Չեխանովեց քաղաքի միջև համագործակցությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՎՍԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 91-Ա

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2025 թվականի սեպտեմբերի 12-ը, ժամը՝ 18:30-ը, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ
ԲԱԲԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ
ՍԱՐԳՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 20
ք. Եղեգնաձոր